

## **ՀՈԳԵԿՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ Գազիկ Տերտերյան**

Ժամանակակից գլոբալ գործընթացներում, ինչպես եւ պատմական անցյալում, հոգեւոր-կրոնական բաղադրիչն ավելի քան կարեւորվում է: Աշխարհի ռազմաքաղաքական պատկերը բնութագրող քաղաքակրթական բախումներում առաջնահերթ են կրոնական գործոնները, իսկ մեծ տերությունների կողմից կիրառվող հայեցակարգերում ներառված են հոգեւոր-կրոնական բնույթի աշխարհագաղափարախոսական պատկերացումներ:

Որպես հետեւանք՝ հոգեւոր եւ կրոնական խնդիրները ցանկացած երկրի համար ռազմավարական նշանակություն են ձեռք բերել, իսկ հոգեւոր արժեքների պահպանումը վերածվել է ազգային անվտանգության կարեւորագույն խնդրի: Հոգեւոր գործոնի անտեսումը թերի է դարձնում ցանկացած ռազմավարական դոկտրինա եւ քաղաքական գործառույթ: Վերոհիշյալ իրողությունները պետք է ընկալվեն ե՛ւ որպես մարտահրավեր հայոց ինքնությանը, ե՛ւ որպես այդ ինքնության զարգացման լրացուցիչ հնարավորություն:

Մարտահրավերի էությունն այն է, որ ժամանակակից ունիվերսալացումը եւ գլոբալացումը պարունակում են հոգեւոր-մշակութային էքսպանսիայի տարրեր: Այդ երեւոյթը, որպես կանոն, արտացոլում է ներգործող երկրի ազգային շահերը եւ այդպիսով կարող է խաթարել կրավորաբար ենթարկվողի ազգային ինքնությունն ու հոգեւոր անվտանգությունը:

Միեւնույն ժամանակ, ընդհանուր տեղեկատվական-գիտելիքային դաշտի ձեւավորումը, տարբեր քաղաքակրթությունների մշակութային փոխազդեցությունները ստեղծում են նպաստավոր պայմաններ սեփական հոգեւոր-մշակութային բովանդակության զարգացման եւ նպատակային սփռման համար:

Մեր քաղաքականությունը նման պայմաններում պետք է կրի երկակի, բայց ոչ հակասական բնույթ եւ հիմնված լինի հետեւյալ դրույթների վրա.

1. Հայաստանը եւ հայությունը ներկայացնում են ուրույն, լոկալ քաղաքակրթություն, որին բնորոշ են ինքնատիպ հոգեւոր արժեքներ: Այդ ինքնատիպությունը պարունակում է հզոր ստեղծագործական եւ կենսական ներուժ. այն հայության հարատեւման գրավականն է: Պատմականորեն ապացուցված այս թեզը պահանջում է մեր հոգեւոր արժեքների անաղարտ պահպանում եւ օտար արժեքների ներթափանցման դեմ արդյունավետ դիմադրության կազմակերպում:

2. Մեր ուրույն քաղաքակրթությունը պարունակում է համընդհանուր, ունիվերսալ բնույթի բաղադրիչներ, որոնց բովանդակությունը ոչ միայն համահունչ է համամարդկային արժեքներին, այլև երբեմն հանդիսանում է վերջիններիս ակունքը: Այս պարագան, ելնելով հայության ազգային շահերից եւ նպատակներից, թելադրում է ակտիվ մասնակցություն ժամանակակից հոգեւոր-քաղաքական զարգացումներին՝ հիշելով, որ Հայոց քաղաքակրթությունը շարունակաբար հանդես է եկել որպես մշակութային արժեքներ արտահանող:

Ազգային-հոգեւոր արժեքների ստեղծման, պահպանման եւ տարածման գործում առանցքային դերակատարում ունի Հայ եկեղեցին: Մեր եկեղեցին բազմաբնույթ գործառույթներ իրագործող ինստիտուցիոնալ կառույց է, որը շարունակաբար իրագործում է հայության ազգային-պետական, գաղափարական եւ սոցիալական կազմակերպումը: Տեղին է շեշտել, որ քրիստոնեական ընդհանրական արժեքներն ի սկզբանե հարազատ են եղել հայությանը: Ինչպես ասում է Գարեգին Նժդեհը՝ «սկզբից ի վեր հայությունն ու *իր քրիստոնեությունը* ձուլված են ի մի բնությունն»: Կիրառելով ժամանակակից եզրաբանությունը՝ կարելի է պնդել, որ քրիստոնեության ընդունումով մեր պետական-հոգեւոր ընտրանին ընդունել է ազգային անվտանգության տեսակետից այն ճշգրիտ որոշումը, որը թույլ տվեց *հայացնելով քրիստոնեությունը*՝ պահպանել հայոց ինքնությունը: Այս համատեքստում՝ Ավարայրի ճակատամարտը եւս պետք է որակել իբրև *ինքնության կռիվ*: Դա ինքնության հաղթանակ էր, որով Վարդանանք կարողացան լուծել հայոց ազգային-հոգեւոր անվտանգության գերխնդիրը: Ակնհայտ է, որ այդ հաղթանակի հավասար համահեղինակներն էին հայոց քաղաքական ընտրանին, հոգեւոր ընտրանին եւ ժողովուրդը: Դա լրացուցիչ վկայում է այն մասին, որ ցանկացած ժամանակահատվածում հայության անվտանգության ապահովումը ենթադրում է պետության, եկեղեցու եւ հանրության ներդաշնակ ու համաձայնեցված գործողություններ:

Վերադառնալով մեր օրերը՝ նկատենք, որ ԽՍՀՄ փլուզման հետեւանքով՝ ամբողջատիրությունից ազատական հասարակության հեղափոխական անցումը լուրջ հիմնախնդիրներ է առաջացրել մեր հոգեւոր անվտանգության համակարգում: Չանդրադառնալով նյութական ոլորտում հեղափոխական դեստրուկտիվիզմին՝ նկատենք, որ ձեւականացված ժողովրդավարություն եւ անորոշ սկզբունքներով քաղաքացիական հասարակություն ստեղծելու այսօրվա կոչերը նույնքան խորթ են մեր հոգեկերտվածքին, որքան եւ կոմունիզմ կառուցելու կարգախոսները: Թերեւս, չպետք է զարմանալ, որ նախկին գիտական կոմունիզմի ջատագովներն

այսօր նույն եռանդով քարոզում են ազատականության գաղափարախոսությունը: Հիշյալ կոչերին զուգահեռ՝ հանրությունում ընթանում է նյութականի բացարձակացում եւ հոգեւորի հանդեպ դրա անվերապահ գերակայության արմատավորում:

Համաձայն փորձագիտական դիտարկումների եւ սոցիոլոգիական հետազոտությունների, մեր հանրությունում այսօր տիրում է հոգեւոր-գաղափարական որոշակի խառնաշփոթ: Ի դեպ, խոսելով «հանրության» մասին՝ մենք չպետք է մոռանանք, որ այսօր հայ հանրությունն իր մեջ ներառում է նաեւ սփյուռքահայությունը: Սփյուռքահայ մեր ազգակիցների մի ստվար հատված, պատմական եւ քաղաքական անբարենպաստ գործընթացների արդյունքում, աղոտ է պատկերացնում կամ մոռացության է մատնել իր ազգային ինքնությունը: Պետությունը, եկեղեցին եւ ողջ հայ ազգը պատասխանատվություն են կրում այդ հատվածի համար, որի կորուստն, առաջին հերթին, մեր հավաքական էության կորուստ է:

Փաստերի ծանրությունը ստիպում է ընդունել, որ հայոց ինքնության պահպանման եւ հոգեւոր սփռում իրագործելու՝ նախկինում մշակված մեխանիզմները, տեղեկատվական հեղափոխության հետեւանքով ձեւավորված ներկա աշխարհակարգի պայմաններում, արդյունավետ չեն գործում: Իրողությունը պահանջում է, որպեսզի նախկինում կիրառվող պաշտպանական տեխնոլոգիաներն արդիականացվեն եւ ստեղծվեն նորերը: Հայության համար դա առաջնահերթ եւ հրատապ խնդիր է:

Միեւնույն ժամանակ, ազգային-հոգեւոր անվտանգության խնդիրները ներկայումս տարաբնույթ են: Դրանց ճշգրիտ ըմբռնումը եւ լուծումը ենթադրում են հետեւողական ու համակարգված հետազոտական աշխատանք՝ գիտության տարբեր ոլորտներում: Ժամանակակից հասարակական-քաղաքական տեխնոլոգիաների մշակումը ենթադրում է, որ այդ հարցում պետությունը եւ եկեղեցին համատեղ պետք է հիմնադրեն, այսպես կոչված, «ուղեղային կենտրոնների» տիպի կառույցներ, որոնց ներուժի վրա պետք է եւ հենվեն իրենց գործառույթներում: Արդի աշխարհում կուտակված փորձը վկայում է, որ նման կառույցները ժամանակի ընթացքում ձեւավորում են ազգային եւ այդ թվում՝ հոգեւոր անվտանգության խնդիրները սպասարկող անհրաժեշտ ենթակառուցվածք: Միայն նման ենթակառուցվածքի առկայությունը հնարավոր կդարձնի կուտակված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեխնոլոգիաների մշակումը եւ գործնական հարթությունում դրանց փորձարկումը:

## **ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Կարեն Վերանյան**

### **Վրաստանի ռազմականացումը**

Հարավային Կովկասում 1990-ական թթ. սկզբներին ծագած ազգամիջյան հակամարտությունների ավարտը սկիզբ դրեց տարածաշրջանի ռազմականացմանը, որն առավել ակտիվացավ հատկապես վերջին 4-5 տարիների ընթացքում: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանի ռազմական մրցավազքի զարգացման հիմնական նախաձեռնությունը մինչև վերջերս ադրբեջանական կողմինն էր: 2005թ. Ադրբեջանի իշխանությունները նախատեսում էին բյուջեից ռազմական ծախսերին հատկացնել ավելի քան \$250 մլն, ինչը, փաստորեն, գրեթե կրկնակի գերազանցում էր հարեւան երկու պետությունների համապատասխան ցուցանիշները:

Վրաստանում 2003թ. նոյեմբերյան իշխանափոխությունը նոր ակտիվություն հաղորդեց տարածաշրջանի ռազմական մրցավազքին: Երկրի 2004թ. պետբյուջեում ռազմական ծախսերի հարցը դարձավ կառավարության ու խորհրդարանի վիճաբանության առարկա: Նախկին վարչապետ Զ.ժվանիայի գլխավորած կառավարությունը նախատեսում էր ռազմական ոլորտին տրամադրել շուրջ \$90 մլն, մինչդեռ խորհրդարանի ղեկավարությունը պահանջեց հատկացնել ոչ պակաս, քան \$150 մլն:

Վերջերս Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Օկրուաշվիլին հայտարարեց, որ 2006թ. բյուջեում ռազմական ծախսերը կազմելու են շուրջ \$300 մլն, ինչը, փաստորեն, կարող է հավասարվել 2006թ. Ադրբեջանի համապատասխան ցուցանիշին: Սա, թերեւս, վկայում է տարածաշրջանի ռազմական մրցավազքում առաջատարության հասնելու՝ Վրաստանի իշխանությունների նախաձեռնության մասին: ԶԼՄ-ում նույնիսկ լուրեր տարածվեցին, թե Վրաստանում կարող է հաստատվել Օկրուաշվիլու ռազմական դիկտատուրան:

Վրաստանի հետագա ռազմականացումը, իր հերթին, խթան կհանդիսանա նաեւ Աբխազիայի ու Հարավային Օսիայի զինված ուժերը համապատասխանաբար ուժեղացնելու եւ համալրելու համար: Թերեւս, այս տրամաբանության ծիրում էին ս.թ. ապրիլին Աբխազիայում տեղի ունեցած լայնածավալ զորավարժությունները, որոնց մասնակցում էին շուրջ 3.000 զինծառայողներ (այդ թվում եւ պահեստայիններ), հրետանային, ավիացիոն ու տանկային ստորաբաժանումներ, նավատորմ:

Վրաստանի ռազմականացումը կարող է հանգեցնել այդ երկրում առկա հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղիների սահմանափակմանը, կարգավորման բանակցային ընթացքի բարդացմանը, կողմերի միջեւ 1990-ական թթ. սկզբներին գոյացած անվստահության խորացմանն ու արմատավորմանը: Չպետք է բացառել նաեւ կենտրոնական իշխանությունների կողմից ռազմական գործողությունների հրահրումը, որի նախադեպն արդեն արձանագրվել է նախորդ տարվա վրաց-հարավ-օսական օգոստոսյան ճգնաժամի ընթացքում, երբ ռազմական բախումների արդյունքում վրացական կողմն ունեցավ ավելի քան 90 զոհ:

### **Ռուսական ռազմակայանների դուրսբերման հարցի շուրջ**

Վերջին ամիսներին Վրաստանում տեղակայված ռուսական ռազմակայանների դուրսբերման ժամկետների հարցը դարձել է միջազգային մակարդակի քննարկումների կարեւորագույն թեմաներից մեկը: Այդ ռազմակայանների շուտափույթ դուրսբերման խնդրում շահագրգիռ են թե՛ Միացյալ Նահանգները եւ թե՛ ԵՄ-ը՝ մի քանի հիմնական պատճառներով: Ռազմակայանների դուրսբերումը նախ կթուլացնի Ռուսաստանի քաղաքական ու ռազմավարական դիրքերը ոչ միայն Չարավային Կովկասում, այլեւ կասկածի տակ կղմի ընդհանրապես ԱՊՀ տարածքում ռուսական ազդեցության հետագա պահպանման հարցը: Ռազմակայանների դուրսբերումն էլ ավելի կամրապնդի արեւմտյան եւ, մասնավորապես, ամերիկյան դիրքերը ինչպես Չարավային Կովկասում, այնպես էլ Կենտրոնական Ասիայում: Տարածաշրջանը կարեւորվում է նաեւ կասպյան նավթային պաշարները արեւմտյան շուկաներ մատակարարելու ապահովության տեսանկյունից: Եվ, ի վերջո, հետխորհրդային տարածքում ամերիկյան ազդեցության ընդլայնումն անհրաժեշտ է դիտարկել չին-ամերիկյան հարաբերությունների, ինչպես նաեւ Միացյալ Նահանգներ-Իրան խնդիրների համատեքստում:

Հավելենք, որ Վրաստանում 2003թ. իշխանափոխությունից հետո բավականին ակտիվացել են վրաց-ամերիկյան (ինչպես նաեւ վրաց-բրիտանական) ռազմական հարաբերությունները: Երկրում օրեցօր ավելանում է ամերիկյան ռազմական հրահանգիչների կողմից վերապատրաստում անցած վրացի զինծառայողների թվաքանակը: Նկատենք նաեւ, որ հարավ-կովկասյան տարածաշրջանում Վրաստանն այսօր միակ երկիրն է, որտեղ արդեն իր ներկայացուցիչն ունի ՆԱՏՕ-ն:

Վրաստանում տեղակայված ռազմակայանների դուրսբերման խնդրի շուրջ Արեւմուտքը զնալով ուժեղացնում է ճնշումները պաշտոնական Մոսկվայի նկատմամբ: Մինչ վերջերս ռուսական կողմը ռազմակայանների

դուրսբերման համար նախատեսում էր 9-11 տարի, վրացական կողմն առաջարկում էր 3 տարի: Սակայն ս.թ. մարտ–ապրիլ ամիսներին ռուսական կողմի փաստացի զիջողական դիրքորոշման արդյունքում ի հայտ եկավ ՌԴ եւ Վրաստանի ԱԳ նախարարների ս.թ. մայիսի 30-ի համատեղ հայտարարությունը, ըստ որի՝ Ախալքալաքի ռուսական ռազմակայանի դուրսբերումն իրականացվելու է մինչեւ 2007թ. հոկտեմբերի 1-ը, իսկ Բաթումի ռազմակայանի վերջնական դուրսբերումը նախատեսվում է 2008թ. ընթացքում:

Հաշվի առնելով Մոսկվայի համար Վրաստանում ռուսական ռազմակայանների ռազմավարական ու քաղաքական կարեւորագույն նշանակությունը՝ կարելի է ենթադրել, որ դրանց դուրսբերման ժամկետների հարցի շահարկումները, ռուսական կողմի վրա բանեցրած ճնշումները կակտիվացնեն ռուսական ներգրավվածությունը տարածաշրջանային այլ հիմնախնդիրներում եւ առաջին հերթին՝ ռուս-վրացական հարաբերություններում: Մասնավորապես, Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման ժամկետների շուրջ ձեռք բերված պայմանավորվածություններին անմիջապես հաջորդեց ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հայտարարությունը, թե Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման ընթացքում Մոսկվան նախատեսում է ռուս-վրացական սահմանամերձ շրջանում՝ Դաղստանում եւ Կարաչաեւո-Չերքեզիայում երկու նոր ռազմակայաններ տեղակայել: Փաստորեն դրանով ռուսական կողմը ձգտում է ոչ միայն ամրապնդել սահմանային գոտու անվտանգությունը, այլեւ մշտական հոգեբանական ճնշում բանեցնել Վրաստանի նկատմամբ՝ ի հակակշիռ այնտեղից իր ռազմակայանների դուրսբերման: Միաժամանակ Իվանովը հայտարարեց, որ «հետխորհրդային հարեւան պետությունների տարածքից ահաբեկչության ուղղակի սպառնալիքի առաջացման դեպքում Ռուսաստանն իրեն իրավունք է վերապահում կանխիչ հարվածներ հասցնել»՝ ակնհայտորեն նկատի ունենալով Պանկիսի կիրճը:

Պետք է նշել, որ Բաթումի ու Ախալքալաքի ռազմակայանների տարածաշրջանային նշանակությունն ու դրանց դուրսբերման արդյունքում առաջացած հավանական խնդիրները բավականին ինքնատիպ են, իսկ որոշ հարցերում՝ ըստ էության տարբեր:

Բաթումի ռուսական ռազմակայանի ռազմավարական կարեւորությունը, Աջարիայի ինքնավարության առաջնորդ Ա.Աբաշիձեի հեռացումից հետո, բավականին սահմանափակվել է, իսկ նրա դուրսբերումն ուղղակիորեն ենթադրում է ռուսական ազդեցության թուլացում ողջ տարածաշրջանում: Այստեղ ռուսական դիրքերի թուլացումը կհանգեցնի Վրաստանի սեւծովյան շրջաններում մեկ այլ տարածաշրջանային տերության՝

Թուրքիայի ազդեցության ընդլայնմանը: Այսօր պաշտոնական Անկարան զգալի տնտեսական ազդեցություն ունի թե՛ Աբխազիայում, թե՛ Աջարիայում: Ավելին, Վրաստանի նախկին նախագահ Էդ. Շևարդնաձեն ողջունում էր վրաց-աբխազական հակամարտության գոտում խաղաղապահ ուժերի հավանական տեղակայումը՝ Թուրքիայի մասնակցությամբ: Բաթումից ռուսական ռազմակայանի դուրսբերումը կարող է ենթադրել նաև Թուրքիայի կառավարության կողմից Կարսի պայմանագրի շահարկում, որի համաձայն Թուրքիան Բաթումի նավահանգիստ ազատ ելունուտի իրավունք էր ստանում:

Ռուսական ռազմակայանների դուրսբերումն առավել խնդրահարույց կլինի հատկապես Ախալքալաքի ռազմակայանի պարագայում: Չի բացառվում, որ դրա արդյունքում ծագեն ազգամիջյան բախումներ՝ ընդհուպ մինչև շրջանի ապակայունացումը:

Ախալքալաքում միջազգային ուժերի հնարավոր տեղակայմանը Թուրքիայի մասնակցության հավանականությունը, թերեւս, մեծ է: Միջազգային առաքելությանը Թուրքիայի մասնակցությունն էական տեղաշարժ կբերի դեպի Վրաստան մսխեթցի թուրքերի վերադարձի գործընթացի առումով: Դրանով Թուրքիայի կառավարությունը կթուլացնի ջավախահայության ազդեցությունը ողջ տարածաշրջանում, փորձ կանի վերցնելու մսխեթցի թուրքերի խնդրի կարգավորման հետագա նախաձեռնությունը Միացյալ Նահանգներից ու ԵՄ-ից, Զյուսիսային Իրաքի թուրքմենների օրինակով՝ ստանձնելով նրանց «հովանավորի եւ պաշտպանի» դերը: Նկատենք, որ Վրաստան մսխեթցի թուրքերի վերադարձի հարցը պաշտոնական Թբիլիսին, ազգային ու տարածքային անվտանգության տեսանկյունից, համարում է անբարենպաստ:

Վրաստանում Թուրքիայի հավանական ռազմուժի ներկայությունը, ըստ էության, կխախտի տարածաշրջանային ռազմական, քաղաքական հավասարակշռությունը՝ ընդհուպ մինչև նրա ապակայունացումը: Հավելենք, որ ջավախահայության եւ ընդհանրապես հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության ու կայունության, տարածաշրջանային կենտրոնների միջև հավասարակշռության պահպանման տեսանկյունից, թերեւս, տրամաբանական է հավանական միջազգային ուժերի կազմում ընդգրկել նաև հայկական կողմին:

Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերման հետ կապված կարելուհարգույն խնդիրներից մեկն էլ վերաբերում է ռազմատեխնիկայի փոխադրման հարցին: Վերջին ժամանակներս մամուլում լուրեր եղան առ այն, որ ռուսական ռազմական տեխնիկայի մի մասը կարող է փոխադրվել Հայաստան կամ արդեն իսկ տեղափոխվել է, ինչը, բնականաբար, մեծ անհանգստություն պատճառեց Ադրբեջանի իշխանություններին:

րին: Այս տեսանկյունից կարելի է ենթադրել, որ Վրաստանից ռուսական զինտեխնիկայի Չայաստան փոխադրումը կհանգեցնի ռուս-ադրբեջանական հարաբերություններում որոշակի լարվածության առաջացմանը, կարի իրավիճակը հայ-ադրբեջանական շփման գծում՝ արդյունքում հանգեցնելով Ադրբեջանի ռազմականացման գործընթացի արագացմանը:

Բոլոր պարագաներում, Վրաստանից ռուսական ռազմակայանների դուրսբերումը եւ այնտեղ Արեւմուտքի ռազմական ներկայության ամրապնդումը Չարավային Կովկասում կստեղծի սկզբունքորեն նոր ռազմաքաղաքական իրավիճակ:



## **ԹԱԼԻՇԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ Արսեն Դակոբյան**

*Վերջին ժամանակներս տարածաշրջանային գործընթացների համատեքստում սկսում են շրջանառվել կարծես թե «մոռացված» խնդիրներ՝ կապված թալիշական, լեզգիական եւ այլ էթնիկ գործոնների հետ: Այս առումով, Հայաստանում վերջերս կայացած թալիշագիտական առաջին գիտաժողովը՝ Թալիշական ազգային շարժման ներկայացուցիչների մասնակցությամբ, բավական խոսում է:*

Ըստ էության, Թալիշական ազգային շարժումն իր գաղափարական ուղղվածությամբ եւ նպատակների քիչ թե շատ հստակությամբ սկզբնավորվում է 1993թ., երբ Ադրբեջանի թալիշաբնակ շրջաններում հռչակվեց Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետությունը: Մինչ այդ երբեւէ ազգային-ազատագրական պայքարի փորձ չունեցած թալիշները 1993թ. ամռանը փորձեցին ինքնակազմակերպվել: Գիշտ է, նրանց միջավայրում միշտ էլ արտահայտվել են դժգոհություններ եւ մտահոգություններ՝ կապված Ադրբեջանում թալիշների ազգային իրավունքների ոտնահարումների հետ, սակայն այդ ամենը մի շարք պատճառներով չի հանգեցրել քաղաքական հստակ նպատակների առաջաշնանը եւ դրանց իրականացմանն ուղղված պայքարի կազմակերպմանը:

1993թ. ամռան իրադարձություններն առաջին փորձն էին՝ ազգային շարժում կազմակերպելու, այդ իսկ պատճառով ասպարեզ իջած գործիչների մոտ կային լուրջ տարածայնություններ՝ կապված ազգային նպատակների ձեւակերպման հետ. օրինակ՝ անկախություն<sup>1</sup>ը, թե՞ ինքավարություն: Ըստ էության, շարժման ծնունդն Ադրբեջանի պետական կազմալուծման հետեւանք էր, որի արդյունքում ի դերեւ ելան տեւական ժամանակ թաքնված ականներն ու սպառնալիքները, որոնք լուրջ մարտահրավերների առջեւ կանգնեցրին այդ հանրապետությանը:

Ազգությամբ թալիշ գործիչների առջեւ, որոնք մինչ այդ ակտիվ գործում էին Ադրբեջանի հասարակական-քաղաքական դաշտում, 1993թ. ամռանը ծառայավ ի՛նչ անել խնդիրը՝ կապված այդ երկրի համակարգային փլուզման հետ. իշխանության կազմալուծում, պարտություններ դարաբաղյան ճակատում եւն: Այս իրավիճակում որոշակիության եւ ինքնակազմակերպման լուրջ ռեսուրսի հնարավորություն էր ապահովում ազգային շարժումը, որը սնվում էր էթնիկ ինքնապահպանման ակունքներից՝ շաղախված ոտնահարված իրավունքների վերականգնմանն ուղղված

դիրքորոշմամբ եւ երկար տարիներ ազգային հենքի վրա կուտակված դժգոհության լիցքերով: Ակտիվ գործունեության մեջ գտնվող թալիշ գործիչների համար շրջադարձը դեպի ազգային ակունքներ պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ վերջիններս խոր հիասթափություն ապրեցին 1990-ական թթ. Ադրբեջանում տեղի ունեցած իրադարձություններից, երբ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ պաշտոնապես թուրքամետ ուղեգիծ որդեգրվեց:

Համընդհանուր տազնապի ու անորոշության այս պայմաններում սրվում էր ազգային համախմբման, ինքնապահպանության անհրաժեշտության գիտակցումը, որը հնարավորություն կտար միասնական ուժերով ապահովություն ձեռք բերել: Ահա այս պայմաններում էլ առաջ եկավ թալիշական «ազգային գաղափարը», որն իր մարմնավորումը ստացավ Ադրբեջանի կազմում Թալիշ-Մուղանական Ինքնավար Հանրապետության հռչակմամբ:

Թալիշական շարժման սկզբնավորումն իր հետ ասպարեզ բերեց «ազգային գործիչների», որոնց կազմը բավական խայտաբղետ էր եւ արտացոլում էր 1990-ական թթ. Ադրբեջանում տեղի ունեցած գործընթացների ողջ հակասականությունը: Ազգային շարժման շարքերը համալրեցին մինչ այդ Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ գործունեություն ծավալած գործիչներ (օր. Ալաքրամ Գումբատովը), Բաքվին հլու ծառայած նախկին չինովնիկներ ու պաշտոնյաներ, ինչպես նաեւ ազգային հիմքի վրա քաղաքական ասպարեզ իջած մտավորականներ (օր. Ֆարհադին Աբուզողեյն): Կան հիմքեր կարծելու, որ շարժման գործիչների հետ բավական սերտ հարաբերությունների մեջ է եղել նաեւ Կովկասի մահմեդականների առաջնորդ Շեյխ Շուքուր Փաշազադեյն: Հետագայում նա մի քանի անգամ միջնորդել է Հեյդար Ալիեւի առջեւ՝ ազատելու բանտում գտնվող Գումբատովին:

Ուշագրավ է այն փաստը, որ այս շրջանում ինքնավարության ղեկավարները եւ շարժման ակտիվիստները շրջում էին գյուղ առ գյուղ, հանդիպում բնակչության հետ՝ բացատրելով իրենց նպատակներն ու խնդիրները: Ինչպես վկայում են շարժման գործիչները, ավագ սերունդը, ի տարբերություն երիտասարդների, պահպանողական կեցվածք ուներ եւ բավական սառն էր ընդունում «ազգային հեղափոխականներին»: Սակայն շարժման գործիչների համար էլ անսպասելի էր, որ Լենքորան էին գալիս վաղուց արդեն թրքախոս դարձած եւ մեծ չափով ծուլման ենթարկված Ջալիլաբադի թալիշները, որոնք պահանջում էին իրենց եւս հաշվի առնել ինքնավարության կազմավորման աշխատանքներում:

Թալիշական շարժման հեռանկարները գնահատելու առումով պետք է նկատել, որ այն բավական ռեսուրս է պարունակում, եւ ազգային

գաղափարների քարոզչությունն ու այդ ուղղությամբ հնարավոր գործընթացները կարող են ակտիվացնել մեծ չափով ձուլման ենթարկված զանգվածների:

Թալիշական ինքնավարությունը, սակայն, երկար կյանք չունեցավ: Բաքվում նոր իշխանության եկած Յեյդար Ալիեւի հետ ինքնավարության ղեկավար Ալաքրամ Գումբատովի բանակցությունները՝ թալիշներին ինքնավարություն տրամադրելու վերաբերյալ, անհաջողությամբ են պսակվում, եւ շուտով «խռովարար» թալիշաբնակ շրջաններ զորակազմեր են մտցվում: Ազգային շարժումը գիտակցաբար դիմադրություն ցույց չի տալիս՝ հիմնավոր մտավախություն ունենալով, որ նույնիսկ մեկ կրակոցը կարող է հանգեցնել թալիշների ցեղասպանությանը:

Բաքվի կողմից շարժումը դաժանորեն ճնշվում է, ղեկավար-գործիչների մի մասը ձերբակալվում, մի մասն էլ տարագրվում է: Ինքնավարության ղեկավար Գումբատովը դատապարտվում է մահապատժի, որը հետագայում միջազգային ճնշման տակ փոխարինվում է ցմահ ազատազրկմամբ. 2004թ. Ադրբեջանի իշխանությունները եվրոպական կառույցների ճնշման տակ ազատ են արձակում նրան, որը հեռանում է Յուլանդիա, ավելի վաղ այնտեղ տարագրված կնոջ մոտ: Ի պատիվ Գումբատովի նկատենք, որ վերջինս երբեւէ չզղջաց իր գործունեության համար եւ Բաքվում տեղի ունեցող դատավարություններում հանդես էր գալիս քաղաքական կոշտ հայտարարություններով՝ ընդդեմ Ադրբեջանում իր ժողովրդի իրավունքների ոտնահարման:

Շարժման շարքերում տարագրության ալիքը շարունակական բնույթ է ձեռք բերում, եւ 1990-ական թթ. կեսերին նույնիսկ միջին շերտի շատ ներկայացուցիչներ լքում են Ադրբեջանը:

Ներկայումս Թալիշական ազգային շարժման հիմնական կառույցները գտնվում են Ռուսաստանում, ուր գործում են մի շարք կազմակերպություններ, ինտերնետային կայքեր, տպագիր մամուլ եւ այլն: Շարժումն իր միավորներն ունի նաեւ Բելառուսում, Յուլանդիայում, ինչպես նաեւ Ադրբեջանում, որտեղ, հասկանալի պատճառներով, այն գործում է ընդհատակում: Նկատենք, որ Ադրբեջանի ԱԱՆ կազմում գործում է հատուկ բաժին, որը զբաղվում է հենց թալիշական խնդրով:

Այս ամենը վկայում է, որ շարժման հանդեպ չափազանց մեծ հետաքրքրություն ունի ՌԴ-ն, որն, ըստ էության, դարձել է շարժման «ինտելեկտուալ» եւ «տեղեկատվական» հովանոցը:

Թալիշական խնդրի համատեքստում չափազանց կարեւոր նշանակություն ձեռք բերեց այս տարվա մայիսին Յայաստանում տեղի ունեցած թալիշագիտական առաջին գիտաժողովը, որին մասնակցեցին Թալիշական ազգային շարժման ներկայացուցիչներ:

Անշուշտ, այս ամենը քաղաքական որոշակի տրամաբանության եւ գործընթացների արտահայտություն է: Այս կապակցությամբ կարող ենք ընդգծել, որ շարժման գործիչների այցելությունը Երեւան, այստեղ Ադրբեյջանի հասցեին հնչած կոշտ հայտարարությունները նրանց՝ երբեւէ Բաքու վերադարձի տեղ այլեւս չեն թողնում, եւ ինքնըստինքյան շարժման «արմատականացումը» խորանում է, որից այն կողմ, թերեւս, զինված պայքարն է:

Ինքնին շարժման համար հայաստանյան այցելությունը տեղեկատվական-քաղաքական մեկուսացումից դուրս գալու եւ նոր հնարավորությունների ձեռքբերման կարելուր խնդիր էր լուծում: Հետաքրքրական է, որ շարժման ներկայացուցիչներն այստեղ էին եկել քաղաքական հստակ ու որոշակի մոտեցումներով: Շարժման մոտակա նպատակն է ինքնավարության ձեռքբերումը Ադրբեյջանի կազմում, իսկ որոշակի գործընթացների պարագայում այն չի բացառում նաեւ անկախության հռչակումը:

Եթե խնդիրը դիտարկելու լինենք աշնանը Ադրբեյջանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների եւ Ադրբեյջանին «ֆեդերալիզացիա» կամ «դեմոկրատիա» պարտադրելու որոշակի գործընթացների համատեքստում, ապա թալիշական շարժման արմատականացումը եւ հայկական գործոնի օգտագործման միջոցով ձեռնարկվելիք հնարավոր քայլերը կարող են այդ երկրի փաստացի կազմալուծմանը հանգեցնել:

Ավելացնենք, որ Թալիշական ինքնավարության հնարավոր ձեւավորումը կարող է ազգային ինքնագիտակցության պոռթկում առաջացնել նաեւ Ադրբեյջանում բնակվող ազգային մյուս փոքրամասնությունների, մասնավորապես՝ լեզգիների պարագայում:

Միաժամանակ, նկատենք, որ Ադրբեյջանի ֆեդերալացման ուղին կարող է ընթանալ համեմատաբար մեղմ՝ ներքաղաքական կամ ներհամակարգային զարգացումների ճանապարհով՝ որեւէ կերպ չշոշափելով էթնիկ խնդիրներ: Սա նշանակում է, որ տվյալ դեպքում այն կարող է տեղի ունենալ Բաքվի քիչ թե շատ վերահսկողության ներքո: Միգուցե այս համատեքստում է տեղավորվում Միլի մեջլիսի պատգամավորի վերջերս հնչեցրած հայտարարությունը՝ Ադրբեյջանի «ֆեդերալացման» անհրաժեշտության կապակցությամբ:

Ինչեւէ, տարածաշրջանային գործընթացներում հեռանկարային առումով չափազանց կարելուր դերակատարում են սկսում ձեռք բերել «չճանաչված ժողովուրդները»: Քաղաքական որոշակի պլանավորման եւ գործուն քայլերի պայմաններում այս գործոնի առկայությունը բավական խոցելի է դարձնում Ադրբեյջանին ու Վրաստանին, ուր ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարումները շարունակական բնույթ են կրում:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ  
ԵՎ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ  
Դավիթ Հովհաննիսյան**

Մայիսի 29-ին ֆրանսիացիները դեմ արտահայտվեցին եվրոպական ընդհանուր պետության այն նախագծին, որը չորս դժվար տարիների ընթացքում վերջապես ընդունվել էր որպես հիմք՝ առաջ շարժվելու համար: Մեկնաբանների կարծիքով, այս քվեարկության արդյունքի հիմքում ընկած էր ֆրանսիացիների ցանկությունը՝ ավելի ազատ լինել իրենց երկրի ներքին եւ արտաքին քաղաքականության հարցերը որոշելիս:

Նշվում է եւս մեկ կարեւոր պատճառ, այն է՝ եվրոպական սահմանադրությունը շատ ավելի դյուրին է դարձնում եվրոպական Միությանն անդամակցել ցանկացող պետությունների ընդունման գործընթացը: Հատկապես այս իրողության դեմ արտահայտվողները կարգախոս էին դարձրել Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի ժիսկար դ'Էստենի արտահայտած միտքը, թե «Թուրքիայի մուտքը ԵՄ կնշանակի եվրոպայի վերջը», քանի որ «Թուրքիայի մշակույթն այլ է, մոտեցումները տարբեր են, ապրելակերպը տարբեր է. նրա մայրաքաղաքը եվրոպայում չէ, բնակչության 95%-ն ապրում է եվրոպայի սահմաններից դուրս»:

Ընդդիմադիրները հրապարակում էին վիճակագրական տվյալներ, համաձայն որոնց 2015թ., երբ Թուրքիան դառնա ԵՄ անդամ, նրա բնակչությունը կլինի մոտ 80-82 մլն, ինչը կնշանակի, որ այդ երկիրը եվրամիության ամենամեծ պետությունն է, ուստի կարող է հավակնել առաջատար, որոշիչ դեր կատարելու:

Այս ամենը, անշուշտ, կարեւոր էր Ֆրանսիայի այն քաղաքացիների համար, ովքեր մայիսի 29-ին «դեմ» քվեարկեցին սահմանադրությանը (ըստ ֆրանսիական վերլուծաբանների, բացասական վերաբերմունք դրսևորողների մեծ մասը պատկանում է վատ ապահովված եւ թերի կրթություն ունեցող սոցիալական խմբերին. մասնավորապես՝ դեմ են արտահայտվել գյուղատնտեսության մեջ զբաղված բանվորները եւ ֆերմերները):

Սակայն ժամանակակից համաշխարհային քաղաքականության էությունը հուշում է, որ այս հանրաքվեն չափազանց կարեւոր նշանակություն ուներ ոչ միայն եվրոպացիների, հատկապես՝ ֆրանսիացիների, այլ նաեւ աշխարհի միակ գերտերության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների համար:

Աշխարհաքաղաքականության հիմնադիրներից մեկի՝ Յ. Մաք Քինդերի

հայտնի աֆորիզմը, որն ընկալվում է որպես ապացույց չպահանջող դրույթ, ասում է.

*«Ով տիրում է Արեւելյան Եվրոպայում, նրան պատկանում է երկրի սիրտը (կամ՝ «միջնամասը» /heartland/- Դ.Յ.),*

*Ով իշխում է երկրի սրտում, իշխում է Համաշխարհային կղզում (Եվրասիա - Դ.Յ.),*

*Ով իշխում է Համաշխարհային կղզում, նա տիրում է աշխարհում»:*

Իսկ ահա մի հատված գեոստրատեգիական վերլուծությունների վարպետ Ջ.Բժեզինսկու «Մեծ շախմատային խաղատախտակ» աշխատությունից. «...եթե Միջնամասը հետ մղի Արեւմուտքին, վերածվի ակտիվ միասնական միավորի եւ կամ հսկողության տակ վերցնի Հարավը կամ էլ որեւէ խոշոր արեւմտյան տերության հետ միություն ձեւավորի, ապա ամերիկյան գերիշխանությունը Եվրասիայում լրջորեն կսահմանափակվի: Նույնը տեղի կունենա, եթե որեւէ կերպ հնարավոր լինի երկու խոշոր արեւելյան խաղացողների միավորումը: Վերջապես, եթե արեւմտյան գործընկերները քշեն Ամերիկային արեւմտյան հեռամասի իր թուխսից, ապա դա ինքնըստինքյան կնշանակի Եվրասիական շախմատային խաղատախտակի վրա ծավալվող խաղին Ամերիկայի մասնակցության ավարտը...»:

Ջ.Բժեզինսկու այս ձեւակերպումն ընկած է ներկայիս (եւ կանխատեսելի ապագայի) ամերիկյան քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկի հիմքում. սկզբունքն ակնհայտ է՝ թույլ չտալ, որպեսզի վերը նկարագրվածը տեղի ունենա:

Դրա համար, նախ, պետք է, որպեսզի Եվրոպական Միությունը շարունակի մնալ Եվրասիայում անվտանգության համակարգի առանցքային մաս, ինչը հարցականի տակ էր դրվում միասնական Եվրոպական պետության ստեղծմամբ, որը որպես պետական համակարգ պետք է ստիպված լիներ ձեւավորել իր՝ արդեն բացառապես Եվրոպական անվտանգության համակարգը:

Եթե համենատեւու լինենք Եվրոպական եւ ամերիկյան տնտեսական հզորությունները, ապա պարզ է դառնում, որ ԵՄ-ը գրեթե բոլոր չափանիշներով գերազանցում է ԱՄՆ-ին: Միացյալ Նահանգները, ի տարբերություն ԵՄ-ի, կենտրոնացրել է աննախադեպ ռազմական հզորություն եւ նորագույն բարձր տեխնոլոգիաներ արտադրելու առավել մեծ հնարավորություններ: Ըստ այդմ, հասկանալի են ամերիկյան ֆինանսական քաղաքականության հիմնավորումները. ծանրացնելով Եվրոն՝ հարված հասցնել Եվրոպական արտահանող արդյունաբերությանը (հիշեցնենք, որ Եվրոպան արտահանում է տարեկան \$2450 մլրդ, իսկ ԱՄՆ-ը՝ \$694 մլրդ ապրանք), չնայած նրան, որ նման ֆինանսական քաղաքականությունը վատ հետեւանքներ ունեցավ նաեւ ամերիկյան շուկաների եւ տնտեսական ընդհանուր իրավիճակի համար:

Սակայն իրական մրցակցությունը ծավալվում է ածխաջրածնային պաշարների ոլորտում, քանի որ թե՛ ամերիկյան եւ թե՛ եվրոպական տնտեսությունները կարող են շարունակել դինամիկ կերպով զարգանալ միայն այն դեպքում, եթե վստահաբար ապահովված են էներգետիկ ռեսուրսներով:

Եվ նորից առաջին պլան է մղվում ենթակառուցվածքային հանգույցների վրա հսկողություն հաստատելու համար պայքարը:

Միացյալ Նահանգները, թափանցելով սառը պատերազմի ավարտից հետո գոյացած բոլոր դատարկ տարածությունները, իրենով է լցնում դրանք՝ ռազմականորեն ապահովելով սեփական շահերը երկրագնդի տարբեր ծայրերում: Բացի այդ, հայտարարելով «համաշխարհային քաղաքական դաշտի համասեռության սկզբունքը»՝ որպես Նոր աշխարհակարգի հիմնաքար եւ կոնֆլիկտներից ու պատերազմներից խուսափելու միակ միջոց, նախագահ Բուշի վարչակազմը խրախուսում է տարբեր երկրներում բոլոր այն կարգի փոփոխությունները, որոնք ուղղված են նշված նպատակին:

Առանցքային դեր է հատկացվում Մեծ Միջին Արեւելք ծրագրին, որի իրականացումը թույլ կտա այլևս չսահմանափակվել ենթակառուցվածքային հանգույցների վերահսկման համար:

Միացյալ Եվրոպան հակադրել է այս ծրագրին «Նոր հարեւաններ» նախագիծը, որի շնորհիվ ԵՄ-ը պետք է ֆիզիկապես մոտենա ենթակառուցվածքային հանգույցներին, զուգահեռաբար լուծելով մի քանի այլ հարցեր եւս, հատկապես՝ դեպի Եվրոպա ուղղված միգրացիոն հոսքերի կարգավորման խնդիրը<sup>1</sup>: Նոր սահմանադրության ընդունումն արդեն ներկայումս հնարավորություն կտար եվրոպացիներին ավելի նպատակամղված եւ ակտիվ կերպով իրականացնել իրենց այլընտրանքային ծրագիրը:

Այս տեսակետից լիովին հասկանալի են դառնում Ֆրանսիայում տեղի ունեցած հանրաքվեի բացասական արդյունքները հրապարակելուց անմիջապես հետո ամերիկյան գործիչների հնչեցրած մտքերն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի հատկապես Թուրքիայի ապագա կեցվածքը գլոբալ աշխարհում, որն ակնհայտորեն ենթադրվում է իբրեւ միաբեւեռ:

Նախ, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռոբերտ Ջելիկը, ս.թ. հունիսի 7-ին ելույթ ունենալով Թուրք-ամերիկյան խորհրդի տարեկան հանդիպման ընթացքում, հայտարարելով, որ Միացյալ Նահանգները շարունակելու է օժանդակել Անկարային ԵՄ-ի մեջ ընդգրկվելու հարցում, կոչ արեց Թուրքիային «Եվրամիություն մուտք գործելուց հեռու նայել եւ ավելի գլոբալ հեռանկար ունենալ»:

Նա շարունակել է՝ ասելով, որ, անշուշտ, Եվրամիությունը «չափազանց կարելոր է Թուրքիայի ապագայի համար, սակայն նույնքան կարելոր են ընդլայնված Միջին Արեւելքի երկրները», ուստի Անկարան պետք

է գիտակցի, որ տնտեսական առումով շատ կարելոր է «ընդունել, որ ինքը գործելու է ավելի գլոբալ միջավայրում»:

Ռ.Ջելիկն ընդգծել է, որ Միացյալ Նահանգները շարունակում է մնալ որպես թուրքիայի գործընկեր եւ նշել է թուրք-ամերիկյան համագործակցության երեք կարեւորագույն ոլորտներ. «ժողովրդավարացման գործընթացներ ընդլայնված Միջին Արեւելքում, Իրաքի վերակառուցում եւ զարգացումներ ընդլայնված եվրասիական տարածաշրջանում»:

Դժվար է ԱՄՆ պետքարտուղարի այս բառերն ընկալել միայն որպես սփոփանք՝ ուղղված թուրքական հասարակությանը, որն, անկասկած, հիասթափված է Ֆրանսիայի, Յուգոսլավիայի եւ մի շարք այլ եվրոպական երկրների այսպիսի մոտեցումից: Ռ.Ջելիկն առաջարկում է թուրքիային, իր պետության տեսակետից, շատ ավելի լայն՝ «360 աստիճան ունեցող հեռանկար»:

Չռչակավոր Ս.Յանտինգտոնը, ելույթ ունենալով Ստամբուլում ս.թ. հունիսի սկզբին կայացած մի գիտաժողովում, նշում է, որ եվրոպացիների կարծիքով՝ թուրքիան եվրոպական երկիր չէ, ուստի *«այնքան ժամանակ, քանի դեռ մնան տեսակետները կմնան լայնորեն տարածված եվրոպական էլիտաների շրջանակներում, թուրքիայի՝ եվրամիության անդամությունը կշարունակի մնալ անհնար: Եվրոպացիներն իրենց տեսնում են այնպիսի վիճակում, որ չեն կարող ասել թուրքիային «ոչ», բայց նրանք նաեւ չեն կարող ասել «այո»:* Ուստի նրանք կշարունակեն հետաձգումների քաղաքականությունը»:

Ս.Յանտինգտոնը բնորոշում է ժամանակակից համաշխարհային քաղաքական համակարգը՝ որպես «միա-բազմաբեւեռ», որտեղ ԱՄՆ-ը միաբեւեռությունն է արտահայտում, իսկ այն դեպքերում, երբ մեծ տերությունները, համագործակցելով միմյանց հետ, կարողանում են սահմանափակել միաբեւեռության դրսեւորումները, աշխատում է բազմաբեւեռության սկզբունքը: Ըստ նրա, թուրքիան, ունենալով շահեր Միջին Արեւելքում, Բալկաններում, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում, այդ տարածաշրջաններից ոչ մեկում էլ չի կարող հավակնել առաջատար տարածաշրջանային ուժի դերին, ուստի այն ունի միայն մեկ իրական հնարավորություն. սպասարկելով ԱՄՆ շահերը՝ համագործակցել վերջինիս հետ եւ դրանով իսկ ընդլայնել ազդեցության գոտիները եւ կարելորել իր դերը: Յանտինգտոնը նշում է, որ թուրքիան ապրում է շատ վտանգավոր հարեւանության պայմաններում, քանի որ իր տարածքի մոտակայքում գտնվող հինգ երկրներ կամ արդեն իսկ ունեն միջուկային զենք (Ռուսաստան, Չինաստան, Յուգոսլավիա, Պակիստան), կամ շատ շուտով կունենան այն (Իրան): Այդ իսկ պատճառով թուրքիան պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի իր ազգային անվտանգության խնդիրների վրա, ինչը հնարավոր է միայն ԱՄՆ օգնությամբ:



Հանտիճգտոնը նշում է եւս երկու հնարավորություն. Թուրքիան, ի վերջո, դառնում է ԵՄ անդամ, սակայն դրա համար Եվրոպան ինքը պետք է փոխվի, եւ, վերջապես, Թուրքիան, հրաժարվելով Աթաթուրքի աշխարհիկության սկզբունքից, պետք է դառնա իսլամական աշխարհի առաջնորդ եւ տանի այն արեւմտյան ժողովրդավարության ճանապարհով: Այս վերջին հնարավորությունը կապված է նաեւ ՄԱԿ ապագա Անվտանգության խորհրդում իսլամական աշխարհը ներկայացնելուն հավակնելու հետ (ինչը նույնպես ենթադրում է Միացյալ Նահանգների եւ Իսրայելի հետ համագործակցություն):

Երկու ամերիկյան գործիչների արտահայտած տեսակետները հստակորեն վկայում են, թե չնայած նրան, որ Միացյալ Նահանգներն անցած տարիների ընթացքում ջանք չխնայեց, որպեսզի օգնի Թուրքիային՝ իրել «տրոյական ձի» մտնել ԵՄ, սակայն Եվրամիության վերջին երկու տարիների ակտիվ արտաքին քաղաքականությունը, Եվրոյի կողմից ֆինանսական շուկաներում դուլարի նկատմամբ բավական ագրեսիվ պահվածքը, ինչպես նաեւ Եվրոպացիների՝ հանրաքվեներում արտահայտած վերաբերմունքը ստիպել են Վաշինգտոնին վերազնահատել իր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, ինչն իր վառ դրսեւորումը ստացավ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթանւղի բացման ժամանակ, որտեղ Թուրքիան անվանվեց այդ ենթակառուցվածքի հիմնական պրովայդեր:

Մինչ վերջին իրադարձությունները, թուրքական կառավարությունը ձգտում էր իրականացնել իր՝ դեպի ԵՄ ուղղված եւ դրանով՝ ամերիկյան ազդեցությանը շոշափելիորեն հակադրվող քաղաքականությունը, որն արտահայտվեց նաեւ հայ-թուրքական հարաբերությունների ձեւաչափում. Թուրքիան, դիմադրելով Միացյալ Նահանգների ճնշմանը, նորանոր պատճառներ էր գտնում Հայաստանի հետ հարաբերությունները չկարգավորելու համար:

Եթե Ռ.Ջելիկի կամ Ս.Հանտիճգտոնի առաջարկած հնարավորությունների տրամաբանությունը թուրքական էլիտաների կողմից ընդունվի, ապա, ամենայն հավանականությամբ, դա կնշանակի Թուրքիայի քաղաքական դերի ակտիվացում «Մեծ Միջին Արեւելք» ծրագրի շրջանակներում: Դա նաեւ կնշանակի, որ Թուրքիան ավելի ակտիվորեն կընդգրկվի Իրաքում տեղի ունեցող իրադարձություններում, Միջին Ասիայում, Հարավային եւ Հյուսիսային Կովկասում:

<sup>1</sup> Այստեղ տեղին է մի գերմանացի բարձրաստիճան պաշտոնյայի արտահայտությունն այն մասին, որ «երբ ներգաղթողները մեկնում են Ամերիկա, նրանք գնում են այնտեղ ամերիկացի դառնալու ցանկությամբ: Թուրքերը չեն գալիս Գերմանիա՝ գերմանացի դառնալու նպատակով»:

## **ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Արտակ Շաքարյան**

### **Թուրքիա–իրան հարաբերությունները 1980–1990-ական թթ.**

Իրանական հեղափոխությունից ու Խոմեյնիի իշխանության գալուց հետո թուրք-իրանական հարաբերությունները, որոնք մինչ այդ բավական լարված էին, որակապես փոխվեցին:

Ընդհանրապես, երկու երկրների հարաբերությունների վրա ազդող գործոններից առաջինը գաղափարական է: Իրանը մինչև այժմ չի հրաժարվել Թուրքիա արտահանել իր «իսլամական հեղափոխությունն» ու ստեղծել այնտեղ «խոմեյնիական» տիպի վարչակարգ: Պաշտոնական ու ոչ պաշտոնական խողովակներով Թուրքիա են ուղարկվում հատուկ ծառայությունների ներկայացուցիչներ՝ ազգաբնակչության գաղափարական մշակման համար: Լայն քարոզչական գործունեություն է ծավալվել նաև սահմանամերձ գոտիներում՝ ռադիոէթերի միջոցով: Իրանական ղեկավարությունը լավագույնս օգտագործում է Թուրքիայի հարավարևելյան շրջանների տնտեսական հետամնացության ու բնակչության կրոնազգացության գործոնները:

Իրանի ծավալած քարոզչությունը հանգեցրեց Թուրքիայում մահմեդական տրամադրությունների ուժգնացմանը եւ դեռ Աթաթուրքի կողմից արգելված կրոնական միաբանությունների վերածննդը: Իրանական քարոզիչներն ակտիվ գործում են նաև գերմանաբնակ թուրքերի շրջանում:

1991թ. ԽՍՀՄ փլուզման արդյունքում աշխարհաքաղաքական նոր իրավիճակ ստեղծվեց, որի հետեւանքներից մեկն էլ մի շարք մահմեդական նորանկախ հանրապետությունների ստեղծումն էր: Ազգային ու կրոնական տեսակետից նրանց առավել մոտ գտնվող Թուրքիայի ու Իրանի հայացքներն ուղղվեցին վերջիններիս, այդ թվում նաև իրանալեզու Տաջիկստանին: 1990-ականների առաջին կեսին Միջին Ասիայում ու Անդրկովկասում ծավալված պայքարն ավելին էր, քան պայքար տարածաշրջանային ազդեցության համար. դա պետական ու տնտեսական մոդելների, աշխարհիկ ու հոգեւոր ուղիների պայքար էր:

Թեհրանը հիմնական շեշտը դնում էր ու շարունակում է դնել «իսլամական հեղափոխության» ոգու վրա: Նա սկսեց գումարներ հատկացնել այդ տարածաշրջանում մզկիթների վերակառուցման համար: Թուրքիայի՝

Միջին Ասիա ու Անդրկովկաս մուտք գործելու հիմնական վտանգն, ըստ Իրանի, այն է, որ «Անկարայի ձեռքերով գործում է ԱՄՆ-ը»: Եթե ԱՄՆ-ը, հաստատվելով Պարսից ծոցում, Իրաքում ու Աֆղանստանում, կարողանա ազդել նաեւ իր հյուսիսային հարեւանների քաղաքականության վրա, ապա Իրանը կհայտնվի շրջափակման մեջ:

Սակայն հիմնականում սույնի ազգաբնակչությունն ունեցող նախկին խորհրդային հանրապետություններում շիական իսլամի գրավչությունը հարցականի տակ է դրվում: Ջարգացման թուրքական տարբերակում կան երեք գործոն, որոնք ավելի կենսունակ են, քան իրանական առաջնայնությունները: Դրանք են՝ պետության աշխարհիկ մոդելը, ազատ շուկայական տնտեսությունն ու համընդհանուր թյուրքական արմատները: Նախկին խորհրդային այս տարածքների համար պայքարի առաջին փուլում Թուրքիան կարծես թե հաղթանակ տարավ:

Սակայն թուրքերի նախկին ոգեւորվածությունն անցել է: Ակնհայտ է, որ առանց ԱՄՆ-ի ու ընդհանրապես Արեւմուտքի զգալի օգնության, Թուրքիային չի հաջողվի յուրացնել այդչափ ընդարձակ տարածքներ, որոնք նաեւ հայտնի աստիճանով տնտեսապես հետամնաց են:

Թուրք-իրանական հարաբերություններում մյուս կարեւոր խնդիրը թուրք-իսրայելական հարաբերություններն են: Իրանը կտրուկ կերպով արձագանքեց 1990-ականների կեսերից սկսված թուրք-իսրայելական մերձեցման գործընթացին: Իսլամական կոնֆերանս կազմակերպության 8-րդ զագաթաժողովին, որը տեղի ունեցավ 1997թ. դեկտեմբերին Թեհրանում, Իրանի ջանքերով ընդունվեց հռչակագիր, որտեղ Թուրքիան մեղադրվեց «սիոնիստական վարչակարգի հետ համագործակցելու» մեջ, «ինչը վտանգ է ներկայացնում ողջ մահմեդական աշխարհի համար»:

Իրանի նախագահ Մոհամադ Խաթամին խիստ բացասական բնութագրեց 1997թ. նոյեմբերին Միջերկրական ծովում անցկացված թուրք-իսրայելա-ամերիկյան ռազմածովային զինավարժությունները՝ հայտնելով, որ «այդ զինավարժություններն ուղիղ սպառնալիք են ներկայացնում Իրանի եւ ողջ մահմեդական աշխարհի անկախության համար»:

1996-1997թթ. թուրք-իրանական հարաբերություններում նկատվեց վերելք, որը կապվում էր իսլամամետ «Բարօրություն» կուսակցության նախագահ Ն.Էրբաքանի՝ Թուրքիայի վարչապետ լինելու հետ: Այսպես, վերջինս նույնիսկ հայտարարել էր, թե ցանկանում է համագործակցել Իրանի հետ ոչ միայն տնտեսական, այլև ռազմական ոլորտում: Սակայն այդ մտքից նա շուտով հրաժարվեց, երբ թուրքական զինվորականությունը տանկերի շարասյուն մտցրեց Անկարա:

1999թ. մայիս – հունիս ամիսներին թուրք-իրանական հարաբերութ-

յուններում նոր լարվածությունն նկատվեց: Անկարան սուր կերպով արձագանքեց Իրանում թուրք պատգամավոր Մ.Քավաքչըի օգտին անցկացված հանրահավաքներին՝ դա որակելով որպես «իրանական գաղափարախոսության պարտադրում աշխարհիկ թուրք հասարակությանը»: Հիշեցնենք, որ վերոհիշյալ ճգնաժամը կապված էր «Բարօրություն» կուսակցության ժառանգորդ «Առաքինություն» կուսակցության անդամ Մ.Քավաքչըի՝ գլխաշորով թուրքիայի Ազգային մեծ ժողով մուտք գործելու հետ: Այդ կապակցությամբ Իրանի դեսպանը կանչվել էր թուրքիայի արտաքին գործերի նախարարություն, որտեղ նրան հայտնել էին, թե «Թեհրանը միջամտում է թուրքիայի ներքին գործերին»:

1999թ. ամռանը թուրք-իրանական հարաբերությունները վատթարացան Քրդստանի բանվորական կուսակցության հանդեպ իրանական վարչակարգի բռնած դիրքի կապակցությամբ: Անկարայի պնդմամբ՝ իրանական կողմը ֆինանսավորել ու աջակցել է այդ կազմակերպությանը ողջ 1990-ական թվականների ընթացքում: Դեռ 1999թ. սկզբներին թուրքական մամուլը գրում էր, թե Իրանում կա ՔԲԿ զինյալների ռազմական հիվանդանոց, իսկ սահմանամերձ շրջաններում՝ նաեւ մի շարք ճամբարներ: Թեեւ սա մերժվում էր Իրանի կողմից, 1999թ. հունիսին թուրքիայի ռազմաօդային ուժերն իրանական տարածքներ ռմբակոծեցին, իսկ սահմանամերձ գործողության անցկացման արդյունքում իրանցիների կողմից ձերբակալվեցին երկու թուրք զինծառայող: Անկարայի այսօրինակ վճռականությունը բացատրվում է Վաշինգտոնի աջակցությամբ եւ որակվում որպես ուժի ցուցադրում:

Թեեւ 1999թ. ամռանը թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջելիթը հայտարարեց, թե «Սիրիայի՝ ՔԲԿ-ին օգնել հրաժարվելուց հետո այդ գործառույթն իր վրա է վերցրել Իրանը», սակայն Անկարան, այնուամենայնիվ, չհամարձակվեց սպառնալ Թեհրանին պատերազմով, ինչպես դա արեց Դամասկոսի նկատմամբ:

Փոխարենը, 1999թ. օգոստոսի 10-12-ին Անկարայում տեղի ունեցավ անվտանգության հարցերով թուրք-իրանական գերագույն հանձնաժողովի վեցերորդ նիստը, որն ուղղված էր լարված մթնոլորտի լիցքաթափմանը: Թեեւ թուրքական կողմը հույս ուներ բանակցությունները կենտրոնացնել ՔԲԿ հարցի վրա, սակայն Իրանն էլ մեղադրում էր թուրքիային հակաիրանական «Մոջահեդինե հալք» կազմակերպությանը սատարելու մեջ: Բանակցությունների արդյունքում պարզապես որոշվեց երկու երկրների ուժային կառույցների առավել սերտ համագործակցություն:

**Չարաբերությունները 2003թ. իրաքյան պատերազմի  
ժամանակահատվածում**

Այս շրջանում, թուրքիայում հակամներիկյան ու հակահրեական տրամադրությունների աճին զուգահեռ՝ նկատվեց ջերմացում թուրք-իրանական երկկողմ հարաբերություններում:

Իրանը դեմ էր թուրքական զորքերն Իրաք ուղարկելուն եւ ողջունեց թուրքիայի տարածքն օգտագործելու ԱՄՆ հայցի մերժումը թուրքական խորհրդարանի կողմից:

Թուրքիայի ներկայիս արտաքին գործերի նախարար Աբդուլահ Գյուլը 2003թ. երկու անգամ այցելեց Իրան. առաջին անգամ՝ դեռ վարչապետի պաշտոնում, երկրորդ անգամ՝ որպես արդեն արտաքին գործերի նախարար՝ մասնակցելու Իսլամական կոնֆերանս կազմակերպության 30-րդ զագաթաժողովին: Առաջին այցի ժամանակ նա հանդիպեց Իրանի նախագահ Խաթամիի հետ՝ քննարկելով իրավիճակն Իրաքում:

Իրաքյան պատերազմի ընթացքում Անկարա այցելեց Իրանի արտաքին գործերի նախարար Քամալ Խարազին, որը կիսեց թուրքերի մտահոգությունները՝ Իրաքի նավթով հարուստ Քերքուք քաղաքի հանդեպ քրդերի հնարավոր վերահսկողության կապակցությամբ:

Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ 2004թ. հուլիսի 28-29-ին տեղի ունեցած այցի արդյունքում, երբ նա հանդիպումներ ունեցավ Իրանի նախագահ Մոհամադ Խաթամիի, Իրանի առաջին փոխնախագահ Մոհամեդ Ռեզա Արեֆի, նախկին նախագահ Աբբար Չաշեմի Ռաֆսանջանի, խորհրդարանի խոսնակ Ղուլամ Ալի Չադադ-Ադեյի, ինչպես նաեւ նավթի, պաշտպանության ու արտաքին գործերի նախարարների հետ, պայմանագիր ստորագրվեց, որտեղ ՔԲԿ-ն ճանաչվեց որպես ահաբեկչական կազմակերպություն: Թուրքիայի ու Իրանի միջեւ անվտանգության հետ կապ ունեցող երեք բնագավառներում հանձնաժողովներ հիմնվեցին, ավելին, վերլուծաբաններն սկսեցին խոսել Անկարա-Դամասկոս-Թեհրան դաշինքի ստեղծման նախանշանների մասին: Երեք երկրների մոտ էլ տարածաշրջանի վերաբերյալ հիմնական մտահոգության առիթ էին քրդական գործոնը Չյուսիսային Իրաքում, Իրաքի տարածքային ամբողջականության ապահովումն ու քրդական պետության ստեղծման արգելափակումը եւ, մասնավորապես, այդ խնդրում Իսրայելի կատարած դերը:

Այս իրավիճակն, այնուամենայնիվ, երկար չտևեց: Արդեն 2005թ. սկզբին թուրք-ամերիկյան հարաբերությունների կարգավորումը նոր շեշտադրումներ մտցրեց թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ:

Իրանի միջուկային ճգնաժամի ընթացքում Թուրքիան նախաձեռնություն չցուցաբերեց ու հանդես չէկավ որպես ակտիվ դերակատար: Իրանի հետ լուրջ բանակցությունների մեջ մտավ Եվրոպան, ինչը կարող էր անել Թուրքիան: Այս բացթողումը շտապեց լրացնել ԱՄՆ-ը. սույն թվականի հունվարի 31-ին ԱՄՆ պաշտպանության նախարարի խորհրդական Դուգլաս Ֆեյթը Անկարայում հանդիպումների ժամանակ նախանշեց Թուրքիայի նոր դերերից մեկը՝ «դառնալ տարածաշրջանում միջուկային զենքերի վերահսկողության նախաձեռնության առաջնորդ»՝ ակներեւորեն ակնարկելով Իրանը: Թեեւ դրանից երեք օր առաջ՝ հունվարի 28-ին, Դավոսի համաժողովում Թուրքիայի վարչապետ Էրդողանը հայտարարել էր, թե իր երկիրը երբեք չի կասկածել, որ Իրանի միջուկային ծրագիրը հետապնդում է խաղաղասիրական նպատակներ, Թուրքիան չդանդաղեց ընդունել ԱՄՆ-ի կողմից առաջարկված այդ դերակատարումը, եւ արդեն մի քանի ամիս անց՝ մայիսի սկզբին, Իսրայելի նախագահ Մոշե Կացավի հետ հանդիպման ժամանակ Էրդողանը հայտնեց, որ կիսում է Իրանի միջուկային ծրագրի կապակցությամբ Իսրայելի մտահոգությունները եւ որ «Իրանի միջուկային ծրագիրը սպառնում է ողջ աշխարհին, եւ Իսրայելը Թեհրանի միջուկային սպառնալիքներին դեմ-հանդիման կանգնած միակ երկիրը չէ»:

### **Չետեւություններ**

Էրդողանի կառավարությունը սկզբից եւեթ վերջնական ընտրություն կատարեց հօգուտ մերձավորարեւելյան ակտիվ քաղաքականության, համաձայն որի Թուրքիան, հանդիսանալով եվրասիական պետություն, պետք է վերածնի առաջնորդի իր դերը Մերձավոր Արեւելքում՝ ցույց տալով Եվրամիությանն ու ԱՄՆ-ին իր նշանակությունն ու անփոխարինելիությունը տարածաշրջանում: Նախկին ժամանակաշրջանի թուրք-իսրայելական համագործակցությունը, որը ձեռնտու էր մարտավարական առումով, արգելակում էր վերոհիշյալ ռազմավարական խնդրի լուծումը թե՛ արաբական, թե՛ մահմեդական աշխարհում:

Թուրք-իսրայելական ռազմատնտեսական գործընկերությունը ձեւավորվել է 1990-ական թվականների կեսերին, երբ Թուրքիան լուրջ խնդիրներ ուներ գործնականում բոլոր հարեւանների հետ: Այդ տարիներին Թուրքիայում ձեւավորվել էր «Բերմուդյան եռանկյունու» գաղափարախոսությունը. Թուրքիան գտնվում է թշնամական եռանկյունում՝ Բալկաններ, Կովկաս, Մերձավոր Արեւելք: Այս խնդրում Թուրքիային օգտակար էր Իսրայելի հետ համագործակցությունը, սակայն նույն դաշինքը կապում էր Թուրքիայի ձեռքերն ու թույլ չէր տալիս քայլեր անել՝ հաշտվելու Սիրիայի

ու Իրանի հետ, որոնք, անկասկած, տարածաշրջանի ամենահանգուցային երկրներից են:

Սա հակասում էր Թուրքիայի հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի արտաքին քաղաքական հրամայականներից մեկին. «ստեղծել Թուրքիայի շուրջ բարիդրացիականության գոտի»:

Իրաքյան պատերազմը լավ առիթ ծառայեց առժամանակ սառեցնելու հարաբերություններն ԱՄՆ-ի ու Իսրայելի հետ՝ թույլ տալով վերականգնել լավ հարաբերությունները մահմեդական աշխարհի հետ: Իսլամական կոնֆերանս կազմակերպության գլխավոր քարտուղարության պաշտոնի հանձնումը ազգությամբ թուրք էքմեղեղին Իսհանօղլուին նշանավորեց Թուրքիա – մնացյալ մահմեդական աշխարհի հակամարտության մեղմումն ու Մերձավոր Արեւելքում Անկարայի դիրքերի առավել ամրապնդումը: Սա համահունչ էր նաեւ ԱՄՆ ծրագրերին, որը Թուրքիան համարում է ժողովրդավարական կառավարմամբ մոդել-երկիր մահմեդական մյուս երկրների համար, իսկ մոդել դառնալու համար չի կարելի լինել «ընտանիքի վտարյալ», ինչպիսին էր Թուրքիան Իսրայելի հետ սերտ համագործակցության ժամանակաշրջանում:

Դեպի մահմեդական աշխարհի գնալու հենց այս փուլում էլ առավել զարգացման հասան Անկարա–Թեհրան հարաբերությունները: Սա բերեց Մերձավոր Արեւելքում Թուրքիայի դիրքերի համեմատաբար կայունացման ու ամրապնդման:

ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավումը նոր որակ հաղորդեց տարածաշրջանում Թուրքիայի դերին: Թուրքիային այսուհետ վերագրվում է ոչ թե «հակախորհրդային ժանդարմի», այլ Մերձավոր Արեւելքում միջուկային զենքերի վերահսկողության առաջնորդի դեր: Սա թույլ կտա Անկարային ներգրավվել Թեհրանի հետ համապատասխան բանակցություններում, ինչը խելացի ու անկախ քաղաքականություն վարելու դեպքում կավելացնի նրա կշիռը ողջ տարածաշրջանում:

## **ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱՔԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ** **Արաքս Փաշայան**

Սաուդյան Արաբիայի Թագավորությունը այն բացառիկ իսլամական պետություններից է, որտեղ կրոնական եւ քաղաքական կառույցներն ու ինստիտուտները սերտաճած են, իսկ հասարակական գիտակցության հիմքում ամբողջովին ընկած է իսլամը: Սաուդյան Արաբիայում, որը թե՛ արաբական եւ թե՛ իսլամական ինքնության կրող է, իսլամն ավելի մեծ դերակատարություն ունի քաղաքական եւ սոցիալական կյանքում, քան որեւէ այլ արաբական երկրում: Սաուդյան Արաբիան միակ պետությունն է ողջ մահմեդական աշխարհում, որտեղ Ղուրանը ծառայում է որպես սահմանադրություն, իսկ հասարակության բարոյական, սոցիալական եւ իրավական կողմերը կարգավորում է շարիաթը:

Պատմականորեն սաուդական պետության ձեւավորման հարցում զգալի դերակատարություն է ունեցել վահաբական գաղափարախոսությունը: Եվրոպացի եւ արաբ որոշ հեղինակների աշխատանքներում վահաբականները բնութագրվել են որպես պուրիտաններ կամ իսլամի բողոքականներ: 1745թ. սաուդյան դինաստիայի հիմնադիր էմիր Մուհամմադ իբն Սաուդի դաշինքը կրոնական քարոզիչ աստվածաբան Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի (1703-1787) հետ հիմք դարձավ XIX դարում սաուդական պետության ստեղծման համար: Ավելի ուշ, 1932-ին, ստեղծվեց Սաուդյան Արաբիայի Թագավորությունը:

Սաուդական դինաստիայի ներկայացուցիչները մեկ անգամ չէ, որ նշել են, թե վահաբականությունը չպետք է դիտարկել որպես իսլամի հատուկ տեսակ: Դրա մասին խոսվում է միայն պատմական եւ դավանաբանական համատեքստում, չնայած վահաբականությունն ընկած է պետական գաղափարախոսության հիմքում:

Սաուդյան Արաբիայի իշխանական համակարգում կենտրոնական դերքը թագավորն է՝ Ալ աս-Սաուդ ընտանիքից: Նա մարմնավորում է թե՛ հոգեւոր, թե՛ աշխարհիկ իշխանությունը: Նրա ձեռքում է կենտրոնացած օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունը: Ճիշտ է, նա չի համարվում օրենսդիր, բայց հրատարակում է օրենքի ուժ ունեցող հրամանագրեր: Ինչպես գիտենք, միջնադարում սուննի իսլամի շրջանակներում ձեւավորված չորս կրոնական-իրավական ուղղությունների ստեղծումից հետո մահմեդական իրավագետները, սկսած 10-րդ դարից, ընդհանուր առմամբ, այլեւս չէին կարող ինքնուրույն կերպով մեկնաբանել Ղուրանն ու



սունճան եւ պետք է հիմնվելին արդեն իսկ գոյություն ունեցող իրավական դպրոցների վրա: Իսլամական իրավական ուղղություններից Սաուդյան Արաբիայում տարածված է հանբալիականությունը, որն աչքի է ընկնում բացառիկ արմատական ուղղվածությամբ: Սաուդյան Արաբիան այն եզակի պետություններից է, որտեղ իսլամական իրավունքը ծառայում է որպես հիմնական օրենսդրական աղբյուր եւ ոչ թե աղբյուրներից մեկը:

Իրավական-դատական համակարգն առաջնորդվում է շարիաթով եւ Ղուրանով: Հիմնականում գործում են շարիաթական դատարաններ: Դատական համակարգն ունի հետեւյալ կառուցվածքը՝ գերագույն դատական խորհուրդ, վճռաբեկ, ընդհանուր եւ վերաքննիչ դատարաններ: Դատարանները խստորեն կիրառում են իսլամական իրավունքի նորմերը, ասենք՝ անդամահատությունը գողության պարագայում կամ քարկոծումը անուսնական դավաճանության դեպքում: Քրեորեն պատժելի են այն բոլոր արարքները, որոնք շարիաթով արգելված են մահմեդականներին, ասենք՝ ոգելից խմիչքների օգտագործումը, մոլեխաղերով տարվելը, ռամադանի ծոմապահության խախտումը, տոկոսով փող տալը, հագուստի մեջ իսլամական ավանդույթի խախտումը եւ այլն: Բացի այդ, Սաուդյան Արաբիայում գործում են կրոնական ոստիկանություն, իսլամական տեսչական եւ վերահսկողական մարմիններ, որոնք առանց դատավարության կարող են պատժել իսլամական բարոյականության եւ էթիկայի նորմերը խախտողներին:

Ինչ վերաբերում է երկրի գործադիր մարմնին, ապա այն ձեւավորում է թագավորը, որը նշանակում եւ ազատում է կառավարության փոխնախագահին, նախարարներին եւ փոխնախարարներին: Երկրի օրենսդիր մարմինը՝ Շուրայի խորհուրդը (*Մաջլիս աշ-Շուրա*), որ խորհրդակցական բնույթ ունի, նույնպես նշանակվի է: Այս մարմինը մշակում է հանձնարարականներ, որոնց հիման վրա ձեւավորվում են թագավորական հրամաններն ու կանոնադրական ակտերը (որոնք, ի դեպ, առանձին դեպքերում օգտագործվում են նաեւ դատական վճիռներում, երբ վիճարկելի հարցերի հիմնավորումները Ղուրանում կամ շարիաթում բացակայում են): Իսլամում խորհրդակցությունը կարեւորվում է: Ճիշտ է, թագավորի իշխանությունը բացարձակ է, սակայն երկրի համար կարեւորագույն նշանակություն ունեցող որոշումներ ընդունելիս ցանակալի է, որպեսզի նա խորհրդակցի ազդեցիկ շեյխերի, սաուդական կլանի ներկայացուցիչների, ուլեմների (կրոնական հեղինակությունների), նահանգների էմիրների հետ:

Իսլամական արժեքները ներդրված են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Կրթությունը, դպրությունը եւ դաստիարակությունը երկրում իրականացվում են հստակ պետական քաղաքականությամբ, որը փորձում է հասարակական գիտակցության մեջ ամրագրել իսլամական արժեքները:

«Կրթության նպատակն է՝ աճող սերնդի մեջ սերմանել իսլամական հավատքը, նրան կրթել, պատրաստել հասարակության կերտմանը, դարձնել այնպիսին, որ սիրի հայրենիքը եւ հպարտանա իր պատմությամբ», նշվում է համապատասխան իրավական դրույթում: Մեծապես կարեւորվում է իսլամական ընտանիքի դերը, որի անդամները պետք է դաստիարակվեն իսլամական հավատքի, առաջին հերթին՝ «...ամենաբարձրյալ Ալլահի, նրա մարգարեի եւ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ նվիրվածության եւ հնազանդության հիման վրա, պետք է հարգեն օրենքները եւ կատարեն դրանք, սիրեն եւ գնահատեն իրենց հայրենիքը եւ նրա փառահեղ պատմությունը»:

Նավթային հսկայական պաշարների եւ դրանցից ստացված վիթխարի հասույթի շնորհիվ Սաուդյան Արաբիային հաջողվեց լուրջ հաջողություններ արձանագրել ներքին տնտեսական կյանքում՝ միեւնույն ժամանակ հայտնվելով ԱՄՆ կենսական հետաքրքրությունների եւ քաղաքական գործընկերության ոլորտում:

Ընդհուպ մինչեւ 1990թ. ժողովրդի եւ իշխող ընտանիքի միջեւ անխոս դաշինք կար: Իրաքի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու շրջանում ԱՄՆ զորքերը տեղակայվեցին իսլամի սրբազան հայրենիքը համարվող Սաուդյան Արաբիայում, ինչը հակաամերիկյան զգացումների եւ թագավորական ընտանիքի դեմ դժգոհության ալիք առաջացրեց երկրի ներսում, հիմնականում սոցիալական այն խավի մեջ, որ կռվել էր Աֆղանստանում՝ ԽՍՀՄ ներխուժման դեմ: Հիշեցնենք, որ այդ շրջանում Աֆղանստանը դարձել էր իսլամական համերաշխության եւ ջիհադական շարժման կենտրոն: Այլախոհ համարվող նման մոտեցումը Սաուդյան Արաբիայում ինչ-որ չափով խթանեց իսլամական վերածննդի շարժումների եւ ներքին ընդդիմադիր տարրերի ի հայտ գալը: 1991թ. Օոցի պատերազմից հետո թագավորական ընտանիքը խոստացավ բարեփոխումներ իրականացնել երկրում, եթե հասարակությունը համաձայնի երկրում ԱՄՆ զինված ուժերի ներկայությանը: 1992թ. Ֆահդ թագավորի կողմից առաջին անգամ հրատարակվեց երկրի հիմնական օրենքի նշանակություն ունեցող մի փաստաթուղթ (ան-Նիզամ աս-Սիյասի լիլ-Յուքմ), որ ուրվագծում է Սաուդյան Արաբիայի պետական կառուցվածքի առանձնահատկությունները: Փաստաթղթի առաջին հոդվածում նշված է. «Սաուդյան Արաբիայի Թագավորությունն ինքնիշխան արաբական իսլամական պետություն է: Նրա կրոնը իսլամն է, սահմանադրությունը՝ Բարձրյալ Ալլահի գիրքը եւ նրա մարգարեի սուննան....»:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո, որին մասնակից անձնասպաններից 15-ը սաուդցիներ էին, թագավորական ընտանիքի վրա մեծացան թե՛ ներքին, թե՛ արտաքին ճնշումները: Երկրում բողոքի նոր

ալիք բարձրացրին բարեփոխումների կողմնակիցները: Ներքին ընդդիմության ճնշումների արդյունքում 2002թ. սկզբին Սաուդյան Արաբիան հրաժարվեց միանալ ԱՄՆ-ին եւ իր տարածքը տրամադրել Տալիբան շարժման դեմ ռազմական գործողությանը: Սաուդյան Արաբիան չթույլատրեց ԱՄՆ-ին՝ իր տարածքն օգտագործել նաեւ 2003թ. Իրաքի դեմ ռազմական գործողության ժամանակ:

Սաուդյան Արաբիայում սահմանադրական բարեփոխումների առաջին լուրջ քայլերը կապված էին 2005թ. փետրվարին սկսված եւ երեք փուլից կազմված տեղական ինքնակառավարման խորհուրդների ընտրությունների հետ, որ տեղի ունեցան Ռիադում եւ նրա շրջակայքում (փետրվարի 10-ին), երկրի արեւելյան եւ արեւմտյան (մարտի 3) եւ հյուսիսային նահանգներում (ապրիլի 21-ին):

Տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին կառավարությունը հայտարարեց դեռեւս 2003թ. հոկտեմբերին: Նշվեց, որ խորհուրդների անդամների կեսը կընտրվի, իսկ մյուս կեսը՝ կնշանակվի: Բարեփոխումների նախաձեռնությունը պատկանում է թագաժառանգ Աբդալլա բին Աբդ ալ-Ազիզին, որը Ֆահդ թագավորի հիվանդության պատճառով 1995-ից դե ֆակտո ղեկավարում է երկիրը: Իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին որոշում ընդունվել է դեռեւս 1977թ., Խալիդ բին Աբդ ալ-Ազիզ թագավորի կողմից: Ուսումնասիրողների կարծիքով՝ այս օրենքի չկիրարկման պատճառն այն էր, որ նավթային հսկայական եկամուտների շնորհիվ իշխանությանը հաջողվում էր բարեկեցիկ պայմաններ ստեղծել սաուդական բնակչության համար՝ խուսափելով հասարակական-քաղաքական բարեփոխումներից:

Նախքան 2005թ. ընտրությունները, համապատասխան ընտրական մարմնի կողմից հստակ կերպով սահմանվեցին ընտրակարգի պայմանները: Իրենց թեկնածությունը կարող էին առաջադրել 25 տարին լրացած Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ կամ արաբական ծագումով եւ տասը տարուց ավելի սաուդական քաղաքացիություն ունեցողներ, որոնք չպետք է նախկինում դատված լինեին կամ էլ վտարված պետական ծառայությունից: Ընտրելու իրավունք ունեին 21 տարին լրացած ոչ զինվորական քաղաքացիները, որոնք պետք է քվեարկեին իրենց մշտական բնակավայրում:

Ընտրական օրենքն արգելում է ընտրություններում կանանց մասնակցությունը: 2004թ. կեսերին, երբ հրապարակվեց ընտրական օրենքի մասին տեքստը, խրախուսվեց հինգ սաուդցի կանանց թեկնածության առաջադրումը տեղական ընտրություններին: Սակայն 2004թ. նոյեմբերին թագաժառանգ Մանսուր իբն Սիթաբը (որը մունիցիպալ հարցերով զբաղվող նախարարության մեջ ղեկավարում է Բարձրագույն տեղական

ընտրական հանձնախումբը) հայտարարեց, որ կանանց չի թույլատրվելու իրենց թեկնածությունն առաջադրել, առավել եւս՝ քվեարկել: Ենթադրվում է, որ կանայք կմասնակցեն տեղական ինքնակառավարման ընտրություններին միայն 2009-ին: Նշենք, որ բացի ընտրական իրավունքից, Սաուդյան Արաբիայում կանանց արգելվում է ավտոմեքենա վարել, չի խրախուսվում առանց ամուսնու տնից դուրս գալը:

Սաուդյան Արաբիայի Թագավորությունում 2005թ. փետրվարից մեկնարկած եւ նախադեպը չունեցող ընտրություններն ընթացան նաեւ «ոչ մաքուր» տեխնոլոգիաներով: Ընտրարշավի ընթացքում սաուդական մամուլում հայտնվեցին հաղորդումներ այն մասին, որ որոշ թեկնածուներ «համեստ գումարներ» են բաժանում ուսանողների շրջանում՝ նրանց կողմից աջակցություն ստանալու ակնկալիքով:

Ընտրությունից առաջ ձեւավորվեցին դաշինքներ եւ խմբակցություններ, որոնք հասարակական շարժման շրջանակներում ընտրապայքար ծավալեցին: Սաուդյան Արաբիայում ապագա բարենորոգումների հարցում լավատեսություն ունեցողները հակված են կարծել, թե դրանք կարող են դառնալ ապագա կուսակցությունների հիմքը:

Ընտրություններում հիմնականում տեղեր շահեցին սաուդական ընտանիքի կողմից աջակցվող թեկնածուները: Ընտրվածների մեջ որոշակի մաս են կազմում նաեւ կրոնական բարձրագույն կրթություն ստացած ուլեմները, որոնց մի մասը, որոշ առումով, ընդդիմադիր կեցվածք ունի:

Սաուդական հասարակական-քաղաքական համակարգի արդիականացման տեսանկյունից տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որ մի նոր քայլ են երկրում սոցիալ-քաղաքական բարեփոխումների ճանապարհին, պետք է նպաստավոր հիմք դառնան լուրջ բարեփոխումների, ընդհուպ մինչեւ երկրի օրենսդիր մարմնի՝ Շուրայի Խորհրդի ընտրությունների համար, որի 120 անդամները ներկայումս նշանակվում են թագավորի կողմից:

Մարդու իրավունքների պաշտպան արեւմտյան կազմակերպությունների տեսանկյունից՝ Սաուդյան Արաբիայում բազմաթիվ լուրջ խնդիրներ կան՝ կապված նաեւ կանանց իրավունքների հետ: Սաուդական կանանց իրավունքի պաշտպան ակտիվիստները հույս ունեն, որ կառավարությունն առանձին կանանց կնշանակի Շուրայի Խորհրդում, սակայն դրա նախագահ Սալիհ բին Յունայդը մերժել է նման հնարավորությունը անգամ այդ մարմնի ընդլայնման դեպքում:

Ակնհայտ է, որ սաուդական քաղաքական համակարգը, թեկուզ դանդաղ, բայց բարեփոխման ճանապարհին է: Մինչ այժմ սաուդական իշխանությունը հենվում էր երկու կենտրոնների՝ իշխող ընտանիքի՝ Ալ աս-Սաուդի եւ ուլեմների իշխող թեւի՝ Ալ աշ-Շեյխի վրա: Սակայն այսօր այդ

համակարգը ձեռք է բերում նոր երանգավորումներ: Դրանում, թեկուզ դանդաղ, մուտք է գործում արդիականացվող հասարակության մի շերտ:

Ուսումնասիրողների կարծիքով՝ սաուդական ընտրանին հազիվ թե ընդառաջ գնար «բարենորոգչական նախաձեռնություններին», եթե չլինեին դրան նպաստող ներքին եւ արտաքին գործոնները:

Ներքին գործոնը նախելառաջ կապված է սաուդական ընդդիմության հետ, որ հիմնականում գործում է թագավորության տարածքից դուրս: Սաուդյան Արաբիայում արգելված են քաղաքական կուսակցությունները, ինչպես նաեւ հասարակական ելույթները: Չնայած բարեփոխումներին, թագավորական ընտանիքը հետեւողականորեն պայքարում է երկրի ներսում ընդդիմադիր տարրերի դեմ: Դեռեւս տեղական ընտրություններից առաջ, 2004թ. մարտին ձերբակալվեցին բարեփոխումների կողմնակից մի շարք հայտնի այլախոհներ, որոնք կոչ էին անում երկրում անցկացնել Շուրայի Խորհրդի ընտրություններ, կառավարման բացարձակ միապետությունից անցնել սահմանադրական միապետության, ստեղծել անկախ օրենսդրական դաշտ: Այլախոհների ձերբակալությունը շատերի մեջ անվստահություն առաջացրեց բարեփոխումներ անցկացնելու՝ կառավարության անկեղծ մտադրության նկատմամբ: Ձերբակալվածների մեծ մասը բանտից ազատվեց՝ բարեփոխումներին չանդրադառնալու նախապայմանով, իսկ մի քանիսը դեռեւս բանտում են:

Ինչ վերաբերում է արտաքին գործոնին, այն առաջին հերթին կապված է արեւմտյան արժեքների եւ ժողովրդավարության ներդրման ու միասեռ հասարակությունների ստեղծման՝ ԱՄՆ գլոբալ քաղաքականության հետ: Նշենք, որ ԱՄՆ-ը ողջունեց Սաուդյան Արաբիայում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման ընտրությունները՝ բնականաբար, դրանք դիտելով որպես կարելի քայլ սաուդական հասարակության հետագա «ժողովրդավարացման» ճանապարհին:

## **ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՎԿԱՍԻ ՉԱՄԱՐ**

### ***Ռայներ Չերման***

Իրանի շուրջ օդակը սեղմվում է: Ամերիկյան զորքերն արդեն կանգնած են Պարսից ծոցի հարավային մատույցներում, առաջին հերթին՝ Քուվեյթում եւ Կատարում: Բացի այդ, նրանց ներկայությունը պահպանվում է նաեւ Իրաքում եւ Աֆղանստանում: Այս երկու երկրներում թեհրանը, Սադամ Չուսեյնի ու Թալիբանի վարչակարգերի տապալման ժամանակ, ծածուկ կերպով աջակցում էր ամերիկացիներին: Սակայն Իսլամական հանրապետությունը չկարողացավ դրանից քաղաքական դիվիդենտներ քաղել: Մինչդեռ ամերիկյան զորքերը հասցրին տեղավորվել Ուզբեկստանում եւ արդեն հիմնավորվում են Ադրբեջանում:

Իրանին չի կարող գոհացնել նաեւ այն փաստը, որ Չարավային Կովկասի երեք պետությունները՝ Ադրբեջանը, Վրաստանն ու Հայաստանն էլ ավելի են առաջանում Արեւմուտքի կողմը: Արեւմուտքի հետ նրանց տնտեսական կապերի խթանման օժանդակում են երկու խողովակաշարերը, որոնցով նավթն ու գազը Բաքվից հոսում են Թուրքիա: Վրաստանով, ինչպես նաեւ Ուկրաինայով եւ Կիրգիզիայով անցած հեղափոխական մրրիկն էլ առավել ցայտուն դարձրեց դեպի Արեւմուտք կողմնորոշումը:

Սակայն թեհրանն անգործ չի մնում՝ տեսնելով, թե ինչպես է աստիճանաբար կորցնում հսկողությունն իր «թիկունքի» նկատմամբ: Ուստի նա ջանում է դառնալ Հնդկական օվկիանոսից մինչեւ հետխորհրդային տարածություն ձգվող տրանսպորտային միջանցքի անքակտելի մասը: Այս տարվա ապրիլին շահագործման հանձնվեց Աբաս նավահանգստից մինչեւ Թուրքմենստանի սահմանն ընկած ճանապարհի վերջին տեղամասը: Այժմ թեհրանը մտադիր է Բանդար Աբասից մինչեւ Ադրբեջանի սահմանը ձգվող մայրուղու անցկացման համար տրամադրել 600 մլն դոլար՝ այդպիսով Սարաքսում եւ Աստարայում ելք ստանալով դեպի նախկին ԽՍՀՄ երկաթուղային համակարգ: Դրանով Իրանը ձգտում է Հնդկական օվկիանոսից՝ Սուեզի ջրանցքով դեպի Արեւելյան Եվրոպա տանող ծովային ճանապարհին առավել էժան այլընտրանք դառնալ:

Միաժամանակ, Ռուսաստանի ազդեցությունն իր հարավային սահմանների վրա նվազել է: Ո՛չ Վրաստանում, ո՛չ էլ Ուկրաինայում նրան չհաջողվեց կանխել իրեն լոյալ վարչակարգերի տապալումը: Ինչպես թվում է, Մոսկվան արդեն բավականաչափ հզոր չէ, որպեսզի պահպանի Կովկասում իր ազդեցությունը: Թուրքիան ապարդյուն կերպով փորձեց

իրենով լցնել ստեղծված վակուումը: Որքան պակասեց Վաշինգտոնի աջակցությունը, ինչը Թուրքիային թույլ էր տալիս Կովկասում վարել ակտիվ քաղաքականություն, նույնքան նվազեցին այն իրականացնելու նրա հնարավորությունները:

Սուսի դեմս իրեն ազգակից Ադրբեջանի ժողովրդի՝ Թուրքիան կարողացավ պահպանել քաղաքական դաշնակցին: Թուրքիայի «հեռանալուց» հետո Կովկասում ու Միջին Ասիայում հիմնական մրցակիցներ դառնում են ԱՄՆ-ը եւ Իրանը: Այդ մրցակցությունում Միացյալ Նահանգները հենվում է իր ռազմական ուժին: Սույն թվի ապրիլի 12-ին ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը Ադրբեջան կատարած այցի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերեց՝ այնտեղ ամերիկյան զինուժ տեղակայելու մասին: Որոշ տվյալներով, արդեն 300 զինծառայող են ժամանել նոր տեղաբաշխման վայր եւ զբաղվում են Կասպից ծովում (որտեղ ելք ունի նաեւ Իրանը) Ադրբեջանի առափնյա պահպանության ստորաբաժանումների ուսուցմամբ: Մոտակա ամիսների ընթացքում Վաշինգտոնը ծրագրում է երեք ռազմաօդային բազաներում տեղակայել մի քանի հազար զինվորական, ինչպես նաեւ արագ արձագանքման ստորաբաժանում՝ Ապշերոնի թերակղզում (Բաքվի մերձակայքում) եւ սպասարկող անձնակազմ՝ ռադիոլուկացիոն կայանների համար: Մոսկվան այս ծրագրերում իր համար կենսականորեն կարեւոր՝ հենց Ադրբեջանի կենտրոնում գտնվող Գաբալայի ռադիոլուկացիոն կայանին սպառնացող վտանգ է տեսնում:

Ադրբեջանում Վաշինգտոնի ներկայության ընդարձակման համար կան երեք շարժառիթ: Առաջին՝ հանրապետությունում առկա նավթի զգալի պաշարներն են, երկրորդ՝ նրա տարածքով անցնում են կարեւորագույն խողովակաշարեր, երրորդ՝ այստեղից հնարավոր է հսկողության տակ վերցնել Իրանն ու Մերձավոր Արեւելքի հյուսիսային հատվածը: Բացի այդ, Վաշինգտոնը ջանում է թույլ չտալ իրանական նավթը Կովկասի միջով դեպի Եվրոպա փոխադրման համար նավթամուղի կառուցումը: Այս ցանկություններին չենթարկվելը Ադրբեջանի ինքնակալ Ալիեւին սպառնում է նրանով, որ ԱՄՆ-ը, ինչպես դա արդեն եղավ Ուկրաինայում եւ Վրաստանում, կսկսի աջակցել ընդդիմությանը: Նոյեմբերին Ադրբեջանում սպասվում են խորհրդարանական ընտրություններ, ինչն Ալիեւին ստիպում է նյարդայնանալ:

Ինչպես եւ Ռուսաստանը, Իրանը շահագրգիռ չէ ԱՄՆ ազդեցության մեծացմամբ: Սակայն Թեհրանին ու Մոսկվային համաձայնեցված քաղաքականության շուրջ պայմանավորվել դեռեւս չի հաջողվել: Կասպից ծովի իրավական կարգավիճակի առիթով տարածայնությունները մինչ օրս էլ խոչընդոտ են հանդիսանում ՌԴ նախագահ Պուտինի՝ Իրան այցելության

համար: Մյուս կողմից՝ Ռուսաստանն «օրինական» է համարում ուրանի հարստացման վերսկսման Իրանի պլանները եւ իրանական միջուկային ծրագրում անվտանգությանը սպառնացող վտանգներ չի տեսնում: Բացի այդ, Ռուսաստանը հայտարարեց իրանական Բուշերի ատոմակայանին (որի շինարարությունը գործնականում արդեն ավարտված է) մինչեւ տարեվերջ միջուկային վառելիք մատակարարելու մտադրության մասին:

Որպես ապահովություն՝ Իրանը, Ադրբեջան Ռամսֆելդի այցից մեկ ամիս առաջ, Բաքվի հետ կնքեց չհարձակման դաշնագիր: Համաձայն այդ փաստաթղթի, յուրաքանչյուր կողմ պարտավորվում է չտրամադրել իր տարածքը երրորդ երկրին՝ մյուս կողմի վրա հարձակվելու համար: Գիշտ է, պարզ չէ, թե Իրանը փոխարենն ինչ է առաջարկել Ադրբեջանին: Չէ՞ որ ժամանակին Բաքուն վրդովված էր Լեռնային Ղարաբաղում հայ-ադրբեջանական հակամարտության հանդեպ Իրանի չեզոք դիրքից, ինչպես նաեւ Իրանի ու Հայաստանի սերտ տնտեսական կապերից:

Իրանական ապրանք արտադրողներն արդեն լայնորեն ներկայացված են Հայաստանում: Բացի այդ, Հայաստանը հետաքրքրվում է իրանական գազի գնմամբ, որպեսզի թուլացնի ռուսական գազից իր կախվածությունը: Իր հերթին, Իրանը պատրաստ է Հայաստանից գնել էլեկտրաէներգիա: Իրանը հույսեր է տածում նաեւ Վրաստանի նկատմամբ: Չնայած Ռուսաստանից հեռանալու թբիլիսիի ձգտմանը, Վրաստանում աճող ազգայնական տրամադրությունները ոչ միշտ են հավանություն ստանում Վաշինգտոնում: Միաժամանակ, Իրանը Վրաստանին առաջարկում է իր գազը՝ որպես այլընտրանք ռուսականին եւ ջանում է ձեռք բերել այդտեղից այն Եվրոպա առաքելու հնարավորություն:

Սակայն այս ջանքերը չեն օգնի Իրանին՝ չեզոքացնել Կասպիայից եկող վտանգները: Այդ հասկանալով՝ Թեհրանն արագացնում է ստորջրյա նավատորմի շինարարությունը՝ փորձելով սեփական ռազմական ներկայությունն ավելի շուտ հաստատել Կասպիայում, քան դա կանեն ամերիկացիները: Ուստի զարմանալի չէ, որ միջուկային խնդիրների շուրջ Եվրամիության հետ բանակցություններում անվտանգության երաշխիքներն Իրանի գլխավոր պահանջը դարձան: Ուկրաինայի հեղափոխությունն Իրանին զրկեց սպառազինության հիմնական մատակարարից. դեռ վերջերս էր Թեհրանն Ուկրաինայից գնել հրթիռակիրներ, որոնք ընդունակ են կրելու նաեւ միջուկային մարտազլխիկներ:

Ուկրաինայի իշխանափոխությամբ կրճատվեց Իրանի արտաքին քաղաքական գործընկերների շրջանակը: Ու եթե Կովկասն ԱՄՆ ու Եվրամիության ազդեցության տակ շարունակի շարժվել դեպի Արեւմուտք, ապա Իրանին, իր հայացքը դեպի Արեւելք ուղղելուց բացի, ոչինչ չի մնում անել: Այնտեղ իրանական «գազային» դիվանագիտությունն արդեն



որոշակի հաջողությունների է հասել: Հնդկաստանի եւ Պակիստանի հետ հարաբերություններում իսկական նվաճում էին 4 մլրդ դոլար արժողությամբ գազատարի կառուցման մասին պայմանավորվածությունները: Իսկ էներգետիկ սով ապրող Չինաստանը ցուցաբերեց շահագրգռվածություն՝ Իրանի հետ էներգակիրներ մատակարարելու վերաբերյալ երկարաժամկետ պայմանագրեր կնքելու: Ընդամենը մի քանի տարում Չինաստանին հաջողվեց դառնալ Իրանի կարելորագույն առևտրատնտեսական գործընկերը՝ դրանով վերածվելով տարածաշրջանի նոր ազդեցիկ «խաղացողի»:

***Frankfurter Allgemeine Zeitung,  
Գերմանիա***

## **ՄԻՋԻՆԱՍԻԱԿԱՆ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԽԱՂԱՏԱԽՏԱԿ Թ.Ռեկոնդո**

Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից, իսկ ավելի ճիշտ՝ ԱՖ-ղանստան ամերիկյան ներխուժումից հետո արեւմտյան աշխարհի զգալի մասն իր համար «հայտնաբերեց» Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած Միջին Ասիայի նոր հանրապետությունների գոյությունը: Կիրգիզիայի եւ Ուզբեկստանի վերջին իրադարձությունները կրկին օրակարգ վերադարձրին երկրագնդի այս տարածաշրջանը:

Եվ նորից «Մեծ Խաղի» տեսությունները կենտրոնական տեղ են զբաղեցնում: Հաշվի առնելով, որ աշխարհի որոշակի հատվածին հնարավոր չէ պատնեշել, այսօր մենք բոլորս այս կամ այն կերպ մասնակցում ենք այդ Խաղին, իսկ Միջին Ասիայի հանրապետությունները ձեւավորեցին մի տարածություն, որը ներկայումս միջազգային աշխարհաքաղաքականությունում առավել մշանակալի դերակատարություն ունի:

Բացի տարածաշրջանի յուրաքանչյուր պետությամբ հատուկ որոշ առանձնահատկություններից, կարելի է ասել, որ Միջին Ասիայի իրավիճակի բարդ պատկերը կազմված է մի քանի ընդհանուր դրվագներից: Առաջին հերթին արժե մշել հետեւյալը. ԽՍՀՄ անկումից հետո տեղի ունեցած քաղաքական եւ ինստիտուցիոնալ փոփոխությունները հանգեցրին կոշտ ու անձնավորված քաղաքական կառույցների ստեղծմանը: Երկրորդ՝ իշխող վերնախավերն անընդունակ գտնվեցին պահպանելու Խորհրդային դարաշրջանի կենսամակարդակը եւ սոցիալական ապահովությունը, բայց միաժամանակ զարկ տվեցին կոռուպցիային ու խնամիականությանը: Բացի այդ, մեկ կամ երկու արտադրանքներից (բամբակ եւ էներգակիրներ) կախվածությունը նաեւ խթանեց տնտեսական ճգնաժամի եւ կոնֆլիկտների զարգացման հնարավորությունը: Ընդ որում, տարբեր պետությունների միջեւ փոխադարձ անվստահությունը հանգեցրեց տարածայնությունների եւ բախումների այնպիսի հարցերում, ինչպիսիք են սահմանամերձ տարածքները, ջրի բաշխումը եւ այլն:

Ահա միջինասիական ներկայիս իրադարձությունների ընդհանուր առանցքի եւս մի քանի տարրեր. կրոնական բնույթի քաղաքական կազմակերպությունների ծաղկում, թմրամյութերի առետրի հետ կապված խնդիրներ, երիտասարդության թվաքանակի աճ, որը տեսնում է, թե ինչպես են խորտակվում կրթության, աշխատանքի, առողջապահության ոլորտներում իր հույսերը եւ, վերջապես, տարածաշրջանում սեփական

նպատակները (էներգետիկ պաշարների վրա հսկողություն կամ աշխարհաքաղաքական շահեր) հետապնդող օտարերկրյա դերակատարներ:

### **Ճգնաժամ**

Թվարկված բաղադրիչների դեպքում ամենաբազմազան ուղղվածության ճգնաժամների զարգացման հնարավորություններն առավել քան ակնհայտ են: Բացի այդ, շատ դեպքերում վերոհիշյալ գործոնների փոխազդեցությունն օգնում է էլ ավելի մոտենալ այդ բարդ իրավիճակին:

1990-ականների վերջին Միջին Ասիայի բնակչության թիվը կազմում էր շուրջ 50 մլն, որի ճնշող մեծամասնությունը դեռ չէր բոլորել 30 տարին: Բնակչության հենց այս շերտն է ամենից շատ դիմադրում վերջին տարիների քաղաքական ու տնտեսական փոփոխություններին, որոնք ոչնչացնում են խորհրդային կառավարման դարաշրջանի բոլոր սոցիալական նվաճումները: Ներկայումս ուսուցումը դադարում է անվճար լինելուց, իսկ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը զգալի չափով կապված է կոռուպցիայի հետ, ինչը հանգեցնում է նրան, որ կրթության խնդիրները հասնում են տարածաշրջանում դեռևս նախադեպը չունեցող չափերի:

Դրան զուգահեռ, նոր իրավիճակը հարուցել է փողոցային բռնությունների եւ գործազրկության աճ, որոնց արժե ավելացնել թմրանյութերի օգտագործումը եւ առեւտուրը, մարմնավաճառության տարածումը, ՁԻՎՎ-ով հիվանդների թվի ավելացումը: Այս ամենը հանգեցրել է նրան, որ բնակչությունը պարտվողական դիրք է ընդունել, ստիպված է արտագաղթել կամ միանալ այն քաղաքական հոսանքներին, որոնք ներկայացված են իսլամիստական կազմակերպություններով:

Տնտեսական տեսանկյունից՝ Միջին Ասիայի երկրները խիստ կախվածության մեջ են բամբակի աճեցումից եւ իրենց տարածքում գտնվող կարելուր էներգետիկ հանածոների, հիմնականում՝ նավթի ու գազի արդյունահանումից: Վերջին ժամանակների գյուղատնտեսական ճգնաժամը (կապված հատկապես սպիտակ ոսկու՝ բամբակի աճեցման հետ) եւ նավթի ու գազի պաշարների հսկողությանը վերաբերող շահերի միազումարը (այստեղ ե՛ւ օտարերկրյա տերությունների ներկայությունն է, ե՛ւ կոռուպցիան...) նույնպես իրենց դերը խաղացին գործազրկության աճի մեջ, ինչը հանգեցրեց տարածաշրջանի յուրաքանչյուր պետությունում ներքին դիմակայության նոր ճակատի ձեւավորմանը:

### **Իսլամ**

Խիստ առանձնահատուկ է այն դերը, որ տարածաշրջանում խաղում է իսլամը: Թեեւ նշված գործոնի դրսևորումները հանրապետություններում տարբեր են, սակայն անհրաժեշտ է նշել մի քանի ընդհանուր կողմեր,

որոնք կոյուրացման այս խաղում իսլամի դերի ըմբռնումը եւ, միաժամանակ, թույլ կտան մեզ խուսափել ընդհանուր գնահատականներ տալուց, ինչին՝ նման իրողությունների չիմացության պատճառով, հաճախ դիմում են առանձին վերլուծաբաններ:

Տարածաշրջանի մահմեդականների մեծ մասը պատկանում է *հանաֆիական* դպրոցին (մազբահ)՝ սուննիական իսլամի առավել չափավոր թելին: Այնուամենայնիվ, այսօր գաղափարախոսական բազմազանությունն աճել է: Մի կողմից, մենք տեսնում ենք պահպանողական ուղղվածության «ավանդական իսլամ», որը, ի դեպ, կարողացավ հարմարվել տեղական սովորույթներին եւ իրողություններին: Որպես դրա հետեւանք՝ այն մինչ օրս էլ պահպանել է իր դերը միջինասիական պետությունների սոցիալական կյանքում: Բացի այդ, տարածաշրջանում կան նաեւ այլ կրոնական հոսանքներ. սուֆիզմ (առաջին հերթին՝ Ուզբեկստանում եւ Տաջիկստանում), այսպես կոչված, «Դավահաթի» կողմնակիցներ եւ «Թաբլիդի» խմբավորումներ, որոնց թիվն այնքան էլ մեծ չէ:

Մյուս կողմից, կան քաղաքական խմբավորումներ, որոնք կապված են իսլամիստական կազմակերպությունների կան հոսանքների հետ: Այստեղ հատուկ դիրք են գրավում երեք միավորումներ՝ Տաջիկստանի Իսլամական վերածննդի կուսակցությունը (ՏԻՎԿ), Ուզբեկստանի Իսլամական շարժումը (ՈւԻՇ) եւ «Հիզբ ուտ-Թահրիր»-ը (Ազատագրման կուսակցություն): Արժե ավելացնել նաեւ տարածաշրջանում կրոնական ոչ ուղղափառ ձեւերի առկայությունը եւ որոշակի վահաբական ու նորվահաբական միտումները (անհրաժեշտ է նշել, որ Միջին Ասիայում «վահաբականություն» եզրը հաճախ կապված չէ սաուդական ծագման հետ, այլ վերաբերում է այդ կազմակերպություններում արտասահմանցիների ներկայությունը):

Մինչ ՏԻՎԿ-ը Տաջիկստանի քաղաքացիական պատերազմին մասնակցելուց հետո սկսեց հետեւել ինստիտուցիոնալ սկզբունքներին՝ ձեւավորելով երկրի ներկա քաղաքականությունը եւ նրա կառույցները, ՈւԻՇ-ը վերածվեց գինված մարտիկների շարժման: Աֆղանստանում այս կազմակերպության կապը Ալ-Կաիդայի հետ եւ դրան հաջորդած՝ Միացյալ Նահանգների կողմից ճնշումները հանգեցրին նրան, որ տարածաշրջանի բնակչության շրջանում նրա դերը չափազանց նվազեց, թեւ նորոշ աղբյուրներ՝ հավանաբար ՈւԻՇ-ի մասին տարածված ուժնացված պատկերացումների պատճառով, այն դասում են ներկա հակամարտության հիմնական գործող ուժերի շարքը:

Սակայն իրականում այդ դերը պատկանում է «Հիզբ ուտ-Թահրիր»-ին: Այն ամենակազմակերպվածն է տարածաշրջանում, հանդես է գալիս խալիֆաթի ստեղծման օգտին, ունի սոցիալական կապեր եւ ներկայաց-

ված է հանրապետության առավել աչքի ընկնող կրոնական հրատարակություններում: Բացի այդ, իր նպատակներին հասնելու համար այն քարոզում է «ինտելեկտուալ պայքար՝ բռնության փոխարեն»: Նրա շարքերից առաջացան եւս երկու կազմակերպություններ (ինչը հազվադեպ է պատահում)՝ «Աքրամիա»-ն, որի շուրջ ծավալվեցին Ուզբեկստանի վերջին իրադարձությունները եւ «Հիզբ ան-Նասրա»-ն (Հաղթանակի կուսակցություն)՝ տաշքենդյան խմբավորում, որը 1999թ. հանդես է գալիս գործողությունների արմատականացման օգտին:

«Հիզբ ուտ-Թահրիր»-ի վարած քաղաքականության օրինակ կարող է ծառայել Ֆերգանայի հովտում առկա կացությունը, որտեղ Անդիջանի փոքրիկ մահմեդական ընկերակցության հիմքի վրա ստեղծվեցին ոչ մեծ արտադրություններ եւ գյուղատնտեսական ընկերություններ, որոնք կարողացան որոշակիորեն հարթել այդ գոտու բնակչության տնտեսական դժվարությունները:

Բախվելով իրականությանը (ի դեմս իսլամիստական խմբավորումների)՝ Միջին Ասիայի երկրների կառավարությունները գնացին տարբեր ճանապարհներով՝ սկսած Ուզբեկստանում բռնությունների կիրառման քաղաքականությունից, վերջացրած Տաջիկստանում նրանց գործունեության թույլատրմամբ: Սակայն տարածաշրջանի բոլոր հինգ կառավարություններն էլ ձգտում են իրենց հսկողության տակ վերցնել իսլամական կազմակերպությունները եւ, միաժամանակ, իսլամն օգտագործել իրենց վարկանիշը բարձրացնելու համար: Այդ հսկողությունը, կախված տվյալ երկրից, նույնպես տարբեր է. շատ խիստ օրենքներ են Ուզբեկստանում ու Թուրքմենստանում եւ առավել հանդուրժողական՝ Տաջիկստանում ու Կիրգիզիստանում:

Հսկողության նման քաղաքականության եւս մեկ դրսեւորում է կրոնի հետ կապված խնդիրների լուծման եւ կրոնական կառույցների հսկման տեղական ստորաբաժանումների ստեղծումը: Այսպիսով, փորձ է արվում վերահսկել կրոնը եւ, միաժամանակ, մերձեցնել նրան տեղական ղեկավարությանը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վերջին իրադարձությունները, կարելի է պնդել, որ նման քաղաքականությունը դատապարտված է անհաջողության:

### **Ժողովուրդներ, երկրներ**

*Ղազախներ, Ղազախստան:* 1991թ. երկրի անկախության նվաճումից հետո միջազգային շատ ընկերություններ փորձեցին իրենց հսկողության տակ վերցնել նրա էներգետիկ պաշարները: Սակայն բնակչությունը չի ստանում այն օգուտը, որ նշված պաշարները պետք է տան իրեն, իսկ

հնացած ենթակառույցները բարդացնում են գազի ու նավթի արտահանումը: Երկրի համար բնորոշ է գործազրկության, արժեզրկման եւ աղքատության բարձր մակարդակը: Միաժամանակ, երիտասարդության զգալի մասը դառնում է մարմնավաճառության ու ՁԻԱՎ-ի զոհ: Շրջակա միջավայրի աղտոտումը նույնպես հանրապետության հիմնախնդիրներից է: Քաղաքական տեսանկյունից՝ երկրի կառավարությունում, այսպես կոչված, «հակաահաբեկչական» պայքարի կողմնակիցներ կան: Նախորդ տարի «Հիզբ ուտ-Թահիր» խմբավորման հետ կապերի կասկածանքով ձերբակալվեցին 60-ից ավելի մարդ, արգելվեց նաեւ մի քանի քաղաքական կազմակերպությունների գործունեությունը:

*Կիրգիզներ, Կիրգիզիա:* Համարվում է նախկին Խորհրդային Միության ամենաաղքատ պետություններից մեկը: Այս երկրի նավթային պաշարները բավական են ներքին պահանջմունքները բավարարելու համար, սակայն դրանց արդյունահանումը դժվար է: Հարեւան պետությունների հետ խնդիրները (ջրային պաշարներ, սահմանային տարածքներ) դարձել են բախումների աղբյուր: Սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո կիրգիզներն իրենց ռազմակայաններից մեկը թույլատրեցին օգտագործել ամերիկացիներին, իսկ մյուսը՝ ռուսներին: Նման քաղաքական հավասարակշռությունը չկարողացավ երաշխավորել երկրի կայունությունը. մի քանի ամիս առաջ ժողովրդական ալիքը ցնցեց նրա քաղաքական կառույցը: Այս հեղաշրջման հետեւում կանգնած մութ շահերը, որոնք «գունավոր հեղափոխությունների» աղբյուր են՝ Միացյալ Նահանգների հովանու ներքո, իրենց տեղը զիջեցին ընդդիմության երկու հիմնական ղեկավարների միջեւ՝ համատեղ կառավարման մասին քաղաքական համաձայնագրին: Մեծ անհանգստություն է առաջացնում երկրի հարավի տնտեսական վիճակը, որտեղ գործազրկության մակարդակը ծայրաստիճան բարձր է:

*Տաջիկներ, Տաջիկստան:* 1992-1997թթ. քաղաքացիական պատերազմից հետո երկիրը դանդաղ վերականգնվում է եւ զգալի չափով կախված է Մոսկվայից, որն էլ օգտվում է դրանից՝ որպես այդ գոտում սեփական ներկայության (ռազմակայան Դուշանբեում) երաշխիք: Էներգետիկ պաշարների սղությունը Տաջիկստանին կախվածության մեջ է դրել իր հարեւաններից, իսկ բարդ տնտեսական իրավիճակը դժվարացնում է դրանց վճարումը: Այստեղ տեղին է ավելացնել Աֆղանստանի մոտիկությունը եւ այն փաստը, որ երկիրը հանդիսանում է Ռուսաստան եւ Արեւմուտք թմրանյութերի փոխադրման առաջին օղակը:

*Թուրքմեններ, Թուրքմենստան:* Համարվում է աշխարհում գազի պաշարներով 5-րդ երկիրը, հարուստ է նաեւ նավթով եւ այլ օգտակար

հանածոներով: Դրանց արդյունահանման հետ կապված դժվարությունները հանգեցնում են նրան, որ պետությունն իր արտոնյալ վիճակից չի ստանում հարկ եղած օգուտը: Երկրում կառավարում է «միակ կուսակցության» քաղաքական վարչակարգը, եւ բացահայտ զգացվում է նախագահ Նիյազովի անձի պաշտամունքը: Վերջերս նրա կողմից անցկացվեցին մի քանի օրենքներ, որոնք թույլ են տալիս խախտել մարդու իրավունքները եւ սահմանափակել քաղաքացիական ազատությունները: Բացի այդ, այն էթնիկապես առավել միատարր պետությունն է, ինչը որոշ չափով թուլացնում է լարվածությունը, սակայն մի քանի տեղական կլանների միջև այն, այնուամենայնիվ, պահպանվում է: Երկրի վերնախավը արդյունահանված օգտակար հանածոներն օգտագործում է իշխանության պահպանման եւ սեփական հարստացման համար:

*Ուզբեկներ, Ուզբեկստան:* Միջին Ասիայի այս ամենախիտ բնակեցված երկիրը վերջերս ցնցվեց անդիջանյան հուզումներից: Կտտանքների կանոնավոր կիրառման եւ զգալի թվով բանտարկյալներ պահելու մեջ ՄԱԿ-ի կողմից բազմիցս մեղադրվելով՝ այն միաժամանակ, ապաստան է հանդիսանում իսլամիստական ամենախոշոր կազմակերպություններից մեկի համար: Դա հանգեցրեց նրան, որ կառավարությունը սաստկացրեց բռնության միջոցները՝ հաճախ դրանք նման խմբավորումների վրա անխտիր գործադրելով: Ե՛վ ԱՄՆ-ի, ե՛ւ Ռուսաստանի հետ հարաբերություններ պահպանող տեղական կառավարության արտաքին քաղաքական «լարախաղացությունը» կարող է իր դեմ շրջվել:

### **Ֆերգանայի հովիտ**

Այն բաժանված է մի քանի հանրապետությունների միջև եւ համարվում է առավել բնակեցված, գյուղատնտեսական եւ էներգետիկ պաշարներով հարուստ շրջան: Միաժամանակ, այն հանդիսանում է իսլամական կազմակերպությունների եւ նրանց սոցիալական ու կրոնական հաստատությունների բարդ ցանցի կենտրոնացման վայր: Հովտի դիրքն այն դարձնում է դյուրամատչելի, ինչի շնորհիվ թույլ է տալիս «պաշտոնապես» հաստատված սահմանների միջով թափանցել հարեւան երկրների տարածք: Օրինակ կարող է ծառայել ուզբեկական կառավարության դիրքորոշումը, որը հովիտ մտնելիս դրել է անցակետ, ինչը հիշեցնում է երկու երկրների սահմանը: Նման միջոցներով Տաշքենդը փորձում է հովիտը մեկուսացնել երկրի մնացած մասից եւ թույլ չտալ «Հիզբ ուտ-Թահրիր»-ի նման կազմակերպությունների ամենուրեք տարածումը:

### **Միջազգային դերակատարներ**

Խորհրդային կառավարման շրջանի ավարտից հետո համաշխարհային շատ տերություններ «աչք դրեցին» աշխարհառազմավարական առումով խիստ կարելուր այս տարածքի վրա՝ ձգտելով իրենց հսկողության տակ վերցնել նավթն ու գազը: Միջազգային ասպարեզի այնպիսի դերակատարներ, ինչպիսիք Թուրքիան եւ Իրանն են, աշխատեցին օգտվել տարածաշրջանի հետ իրենց մշակութային ու պատմական կապերից, որպեսզի հաստատեն սեփական ներկայությունը:

Սակայն ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Չինաստանի կողմից ճնշումը խափանեց այդ փորձը: Վաշինգտոնը ձգտում է հսկողություն սահմանել տարածաշրջանի էներգետիկ պաշարների վրա եւ, միաժամանակ, «սպառնալիք դառնալ» Չինաստանի ու Ռուսաստանի համար՝ խանգարելով նրանց խաղալ իրենց դերը Միջին Ասիայում: Պեկինը շարունակում է աջակցել տեղական կառավարություններին, որպեսզի նրանք դուրս գան Մոսկվայի կամ Վաշինգտոնի հսկողությունից եւ անցնեն իր թեւի տակ: Այս նույն պատճառով էլ Մոսկվան չի կարող թույլ տալ՝ իրեն դուրս մղել տարածաշրջանից, որտեղ նախկինում այնքան կարելուր դիրք էր զբաղեցնում:

Վերջերս տարածաշրջանային բեմահարթակին է հայտնվել նաեւ Ճապոնիան, որը նույնպես այստեղ փորձում է պաշտպանել սեփական շահերը:

***Rebellion, Իսպանիա***



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Գագիկ Տերտերյան</b>	
<b>ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ</b> .....	<b>1</b>
<b>Կարեն Վերանյան</b>	
<b>ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ</b> .....	<b>4</b>
<b>Արսեն Հակոբյան</b>	
<b>ԹԱԼԻՇԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ</b> .....	<b>9</b>
<b>Դավիթ Հովհաննիսյան</b>	
<b>ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔԿԵՆ</b>	
<b>ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ</b> .....	<b>13</b>
<b>Արտակ Շաքարյան</b>	
<b>ԹՈՒՐԹ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>18</b>
<b>Արաքս Փաշայան</b>	
<b>ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ</b> ....	<b>24</b>
<b>Ռայմեր Հերման</b>	
<b>ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ</b> .....	<b>30</b>
<b>Թ.Ռեկոնդո</b>	
<b>ՄԻՋԻՆԱՍԻԱԿԱՆ ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԽԱՂԱՏԱԽՏԱԿ</b> .....	<b>34</b>

*Շապիկի վրա պատկերված է  
տեսարան Կապանից*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ ՕՄՄ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: